Ա Ր Ա Ք Ս

Թիւ Գ. — ՇՐՋԱՆ ԺԸ. 1885 ՏԱՐԻ ԺԷ. ՄԱՐՏ 31.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԽՈՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

Մարդը մէկ՝ խօսքը մէկ. խօսքը մէկ՝ մարդը մէկ. օրհնուէ՛ Նա, որ ժամանակին լռելն էլ գիտէ: Մարդուս ամեն գործի մէջը վերջին աստիճանի պարզութիւն պէտք է երևի, իսկ հարկաւոր ժամանակին՝ անպատրուակ ճշմարտութիւն. բայց ինչ որ մի բարեկամ՝ բարեկամին ասումէ, հաւատալով որ խօսքը մնոը կըմնայ, այդ ասածի և ոչ մի վա՛ճնկը պիտի լսուի:

—

«Լաւ խօսելը մի արուեստ է, բայց լռելու արուեստը աւելի՛ մեծ է»: «Մենք ամենքս, ասումէ Յակոբոս առաքեալը, սխալվումենք տեսակ տեսակ»: բայց ով որ և ոչ մի խօսքի մէջ չէ սխալվում՝ նա է կատարեալ մարդը, ու կարող է իւր բոլոր անձը սանձած պահել:

Խօսիր՝ որ տեղ կարող է օգուտ ունենալ. բերանդ փակիր, մի խօսիր ամենևին՝ որտեղ խօսելդ կարող է վնա՛ս բերել: Ա՛յս վտքը խօսքերի մէջ քո առաջը դրած է թէ՛ պարզա-ընեան գեղեցիկ առաքինութիւնը և թէ խօսէ մէջ ոանենալը- խոհեմա-ընեան նոյնչափ գեղեցիկ առաքինութիւնը:

Մի առ մի աչքից անց կացնենք մեր ունեցած ընկերական յարաբերութեանց ամեն հանգամանքները, ծրչալի և ծրքան անհաւատարմութիւն կըգտնենք ամեն տեղ: Ի՛նչպէս ամենայն ուշադրութիւնը լարած ու անհանգիստ սրտով դիտումէ մէկը այս տեղ միւսի ամեն մի ատած խօսքը, արած շարժմունքը. ինչքան վատ կասկածների ու կարծիքների մէջ է ձգում միւսին այն տեղ մէկի կերպարանքը իւր շարժումներով. ուստի է արդեօք մարդոց առ միմեանս ունեցած այս սակաւութիւնը սրտաբացութեան կողմանէ: Նորանից է որ, մարդ կայ՝ երբ որ տեղը չէ, ժամանակը չէ՝ չի բացվում, և երբ որ տեղը չէ ու ժամանակը չէ՝ բացվումէ և ամեն բան անտեղի ու անխոհեմաբար ասումէ ու խօսում:

Քանի քանի գերդաստաններ, որ երբեմն սերտ յարաբերութիւն ունէին միմեանց հետ ու մտերիմ բարեկամութիւն, մէկ էլ տեսնումես իրարից հեռացան, պատերին, օտարացան, իրար սկսեցին տեսել, թշնամի դառնալ և իրար թշնամութիւն անել. բայց և այնպէս, ոչ մէկը նոցանից չէ խաբել միւսին՝ նորա սեպհականութեանը կամ ունեցածին վնաս հասցնելով. ոչ մէկը միւսին գիտութեամբ, նենգութեամբ, խարդախութեամբ, կամ չարամտութեամբ այնպիսի վորձանքի ու անբաղդութեան մէջ չէ ձգել՝ որից վրկուելիս չըլինի: Ի՞նչ էր պատճառը, որ նոցա բաժանեց իրարից: — Անզգոյշ բացաբերանութիւնը:

Դու գանգատումես, որ ճշմարիտ բարեկամութիւն չկայ, որ մարդիկ քեզ հետ սուտն են վարվում. դու գանգատումես որ չես կարողանում մի խօսք բերանիդ հանել, որին խակայն չար մեկնութիւն չըտային ուրիշները. դու չես իմանում՝ թէ ինչքիլ ես արժանացել ուրիշների քեզ հետ ունեցած այդպիսի վարմանը. դու աւելի հասնդուածես թէ՝ ամեն մի մարդու լաւն ես կամենում, լաւն ես ասում, որ դու ուրախութեամբ օգնումես, երբ որ մի մարդ քո օգնութեանդ կարօտ է, որ դու ամեն մի մարդու հետ բարեկամական ու քաղցր վարմունք ես ունեցել. քո կարծիքով մի այնպիսի բան չկայ, որ քեզ մեղադրել տար, բայց և այնպէս տեսնումես որ մարդիկ իրանք իրանց քեզանից բաւական հեռու են պահում. ինչից է այս: Ա՛խ, կարելի է, որ մի քառորդ անխոհեմ ժամից է, որ դու քո լեզուդ ամենևին քեզ չըպահեցիր, ու այնպիսի բաներ հանեցիր բերանիցդ, որ քո բարեկամիդ քեզ հակառակորդ դարձրեց: Կարելի է որ ամենևին մտոգ էլ չէ քո ասած

խօսքերը ու այն ձախ քառորդ ժամը. կարելի է որ վաղուց մըտքիդ ընկել են բոլորովին այն խօսքերը, կամ բանի տեղ չես դրած այն ժամանակը, երբ որ անդգոյշ բացաբերանութիւնովդ խօսում էիր թէև չար մտքով չէին ասածներդ ամենևին։ Բուրը ձեռքին առած գաշտի մէջ պատերազմող մարդը շատ հեշտութեամբ է մոռանում՝ թէ ումն է վէրք տալիս, թէև դորա վերայ շատ անգամ են մտածում նոքա, որոնք վէրք են ստացել և քանի որ աչքները ձգում են իրանց ստացած վէրքերին։

Սորա համար ամեն մի քրիստոնէի օրէնք լինի մարդոց հետ վարման մէջ Սուրբ Գրոց այն ոսկեղէն խրատն ի մտաննայն Սողոմոնի, որ գրում է՝ Ըստ ո՞ր ընկերէ հեռ, քայց ո՞ր գաղտնիքը ջ՞ յայտնէ. (Առակ. Պլ. Իե. Համ. 9,)

Սովորաբար բոլորովին սխալ գաղափար են կազմում մարդիկ խօսքի և վարման մէջ՝ մեր ունենալու խոհականութեան վերաբերմամբ, երբ որ խոհականութիւն ասելով, հասկանում են միայն ծածուկ պահել այն՝ ինչ որ մէկը մեզ հաւատացել, ասել է թէ իւր դիտաւորութիւնները, թէ իւր հանգամանքների և թէ իւր ունեցած կապերի մասին։ Բայց այնպէս չէ, չարաչար սխալմունք են։ Գաղտնիք է խնամատուն մարդու համար այն ամեն բանն, որ իւր նման մարդոց ամեն մէկը կըցանկար՝ ուրիշները չիմանան, չը հրատարակուի, ու որ և իցէ աւելի չը գաւնայ նրան համար վտանգի մէջ ընկնելու։ Այդպիսի բան հրատարակել երբէք իրաւունք չը համարես քեզ, թէ որ աւելի բարձր ու մեծ պարտականութիւններ քեզ չհրամայեն այդ մասին ճշմարիտն ասել ու խօսել։

Այսօրեայ տեղն ունին ոչ միայն այլևայլ դիտաւորութիւններ, որ եթէ ժամանակից առաջ յայտնուին՝ կունայնանան. այլև տան մէջ պատահած անցքեր, ընտանեաց վերաբերեալ գործեր, ինչքի, ստացուածքի ու կարողութեան հանգամանքներ և ուրիշ բաներ, որ մարդ երբէք չի ցանկանալ, որ ուրիշներն իմանան, որովհետև ըստ ինքեան անմեղ բանն և՛ հեշտութեամբ կարող է և չարն մեկնուել, և այս կամ այն չարամիտ մարդը կարող է իւր լսածն և չարն գործածել ու մի վնասակար բան դուրս բերել։ Ճշտոյ՝ տեղ ունի նաև ա՛յն, ինչ որ ամեն մարդ ծածուկ է պահում, օրինակ՝ իւր պակասութիւնները, սխալանքներն և թուլութիւնները՝ որոնցից ամաչում, ու չէր ցանկալ երբէք, որ շատերի ականջն լինէր հրատարակուելով, նոյնպէս և այն խօսքերն ու գաւառութիւննե-

ըը, որ մարդ իրան մերձաւոր շրջանի մէջ ասում է ու յայտնում, որոնք կարող են շատ ճշմարիտ լինել, բայց բերնէ բերան ընկնելով՝ կարող էին վնասակար հետևանքներ ունենալ։

Այս մտքով խոհականութիւն գործ դիր թէ ուրիշների գաղտնիքների մասին և թէ քեզ վերաբերեալ գործերիդ մէջ։

Ո՞ւղեղնէրէ գործէրէ ձէջ խոհական-ի՞ գործ պիէ՝ թէ ինքդ հասկացած լինիս և թէ քեզ հաւատալով՝ ասած լինին, որ իմացածդ քո մօտ մնայ. ոչ մի մարդ իրաւունք չունի ուրիշների մասին այն բանը յայտնելու, ինչ որ իրանք յայտնել չեն կամենում։ Ինչ որ գաղտնիք չէ՞ կարող ես ասել, խօսել. բայց ով որ առանց ուրիշի կամքին բերնից հանում է նորա մասին չասելու բանն ու այդպիսով հրապարակ է ձգում, այն մարդը ճշմարտապէս մի գողութիւն է անում՝ ուրիշի վերաբերմամբ։

Սովորաբար բացաբերանութիւնը թեթևամտութեան հետևանք է. աւելի շատ անգամ հետևանք է այն ձգտմանն, որով ցանկանում է մէկը ուրիշների առաջը շատ բանի տեղեկութիւն ունեցող, շատ բան իմացող ոմն երևել. ու իւր տուած կարծիքներով փայլել ուրիշների առաջ. շատ անգամ և՛ս հետևանք է չարամիտ՝ կամ խարդախ բնաւորութեան։

Զգոյշ կաց որ և՛ իյէ ձեռակով պատմելո՞ւ պաղ ուրիշների վերայ՝ առանց լաւ մտածելու, որպէս զի անխոհեմաբար խօսած չըլինիս. նոցա խօսքերը, նոցա կարծիքները, մինչև անգամ քո ամենամտերիմ բարեկամացդ մէջը ընկնէ՛ն, եթէ դու որ և իցէ կերպով կարող ես մտքից անկացնել թէ՝ ասածդ բերնէ բերան ընկնելով՝ կարող է վնասակար լինել։

Եթէ որ ընկերութեան մէջ ուրիշների վերայ վատ կարծիքներ ու դատողութիւններ ես լսում, այդ խօսակցութեան մէջ չ՛ընդունել, չ՛հաճախել՝ եթէ որ չես կարող համեստութեամբ ու հիմնաւոր կերպով պաշտպանել նորան, որի վերայ սխալ դատողութիւն են տալիս։ Շատ անգամ լռելն էլ ճարտարախօսութիւն է՝ և խելօք մարդոց առաջին համարում ու համակրութիւն է գտնում։ Անհնար է որ՝ շատ թէ ուշ՝ ականջը չըհասնի այն մարդուն՝ ուրիշների իւր պակասութեանց, կամ իւր ընտանեկան հանգամանաց վերայ տուած վատ դատողութիւններն, և նա քո խելօքութիւնով ու խոհեմութիւնով լռութիւն պահելն ու նոցա խօսքերին չըխառնուիլդ լսելով, քեզ սրտանց չըպատուի։ Այս տեղ դու՝ մի

երկիր նուաճելու նման՝ մի սիրտ վաստակեցիր առանց բերանդ բանալու։

Անկարելի է, որ մարդս իրան այնպէս կարողանայ պահել, որ ուրիշների գործերի վերայ ամենևին բերան չբանայ ու չխօսի։ Այդպիսի դիպուածներում քեզ համար պարտականութիւն համարիր թէ ընկերութեան մէջ և թէ մտերիմ մարդոց հետ ունեցած իօսակցութեանց մէջ՝ յիշել ու յիշեցնել այն բարի գործն, որ ուրիշների մասին իմացել ես։ Մի քաշուիլ յիշել նոցա լաւ յատկութիւնները, նոցա բարեկամական ու բարեվիտ դատողութիւններն այլոց վերայ, նոցա այս և այն բարի գործերը։ Այն գովասանքն, որ դու տալիս ես, լսողների վերայ այն ներգործութիւնն է ունենում՝ որ նոքա յարգանք են ունենում թէ դէպի այն անձը, որոյ մասին լսումեն ասածներդ՝ և թէ դէպի քեզ։ Դու մարդոց մէջ աւելացնում ես իրար հետ ունեցած բարեկամութիւնը, համաձայնութիւնը և իրար հետ սիրով ու հաճոյական վարմունք ունենալն, և քո վերայ է դառնում քո պատճառած բարոյ մի մասն։ Զգուշացիր մինչև անգամ գաղտնիքներ իմանալու հետաքրքրութիւնից, պատեհութիւն էլ որ ունենաս՝ մի ցանկանալ։ Ինչքան որ քիչ բան իմանաս՝ այնքան աւելի սիրտդ հանգիստ կըլինի և այնչափ էլ աւելի որպէս պարզութեամբ ուրիշների հետ կըտեսնուես։ Նաև անգամ ուրիշի գաղտնիք իմանալը մեզ մեծ վտանգի մէջ է ձգում՝ այն կողմանէ, որ մի նայուածքով կամ կերպարանքի մի շարժմունքով ինքներս ակամայ մեզ մատնում ենք։ Նաև անգամ մի գաղտնիք իմանալը մեզ ամենաանախորժ դրութեան մէջ է ձգում, որովհետև դարանով մի պարտականութեան տակ ենք ընկնում այն գործի մէջը մեր անկախ գործունէութեամբ մէջ տեղ դուրս գալ։ Եթէ մենք այն գաղտնիքը չիմանայինք՝ թէ մենք և թէ՝ ուրիշները, բաւական մտատանջութիւնից ու դժուարութիւններ քաշելուց ազատ կլինէինք։ Իսկ եթէ քաղաքական ընկերութեան մէջ քո ունեցած դիրքովդ այնպիսի բաների մասին տեղեկութիւն ունես, որ քեզ պէս մի մարդ ծածուկ է պահում՝ կամ իւր յատուկ բարեկամի համար պէտք է ծածուկ պահի ու չյայտնի, մտքիդդ նորա մասին իմացածդ այնպէս հետաքրքրութիւն, որպէս թէ ամենևին չըգիտես։ Մինչև անգամ քո ինքդ քեզանից էլ ծածկելու պէս արա խոհականութիւնով։ և զգոյշ մնա՝ որ և իցէ աւելի տալուց, որ կասկածներ կարող էին յա-

լուցանել՝ թէ դու գիտես։ Ամենամտերիմ բարեկամիդդ անգամ ծածկիր, որովհետև ապահով չես՝ թէ որչափ երկար ժամանակ այլ եւս քո բարեկամդ կմնայ։

Ուրիշների գաղտնիքը յայտնելն այն տեղ և այն ժամանակ միայն թոյլատրուած է, մինչև անգամ անհրաժեշտ է, ուր որ աւելի բարձր պարտականութիւններ մեզ հրամայումեն չծածկել, այս բանն այն տեղ և այն ժամանակն է հարկաւոր, երբոր օրէնքն ու իշխանութիւնը պահանջումեն հասարակաց բարւոյն համար։ Այնպիսի տեղ այնպիսի ժամանակ խոհականութիւնը տեղ չունի ուբերանը խուփ պահելով զմրելը չարագործութիւն և յանցանքի մէջ մասնակցութիւն է։ Պարտականութիւն է գաղտնիքը չպահել, այլ պարզ պարզ յայտնել, երբոր այդ մեր իմացած գաղտնիքն ուրիշների վնասուն համար նիւթած չարամիտ դիտաւորութիւններ են. կամ երբոր մենք գիտենք թէ՝ ումանց ունեցած այլ տեսակ մտածմունքն՝ ուրիշները՝ թեթեւամտութիւնից, տգիտութիւնից, կամ բարեմտութիւնից կարող են ի բոլոր սրտէ ընդունել, ամաստիկ հաւատ ընծայելով, ու դորանով վատ վիճակի մէջ ընկնել։ Այստեղ մարդոց ճշմարիտ բարեկամը պէտք է առաջ դուրս գայ՝ զգուշացնելով. և որոնք մօտ են վտանգի մէջ ընկնելու, զգուշաւոր կերպով իսկապէս բարի ճանապարհը սորվեցնի։ Պարտականութիւն է լոյս աշխարհ հանել վատութիւնն, երբոր լռելը միայն այն նշանակութիւնը կունենար՝ որ յայտնի մարդիկ իրանց անպիտանութեան, իրանց կրքոտ չարամտութեան, իրանց նեղսրտութեան մէջ հաստատուեն, և այլոց միայն վնասակար լինին իրանց սեպհական շահուն համար։ Այսպիսի տեղ այլոց ծածուկ չար միտքը չը յայտնելը, չհրատարակելը միշտ ամենայն արհամարհանաց արժանի մի անարգ հաճութիւն ու հաւանութիւն տալ է չար բանին՝ բարւոյ վնասուն համար։

Բայց կան և այնպիսի մարդիկ, որ ուրիշ ամեն բանի համար լաւ լռել գիտեն, իսկ իրանց սեպհական գործերի համար բացթերան են, պիտի անպատճառ ուրիշներին ասեն, պատմեն։ Զափազանց պարզասրտութիւնից կամ թեթեւամտութիւնից, որովհետև կարծումեն թէ՝ ինչ որ իրանց է վերաբերում, ուրիշների համար էլ մեծ նշանակութիւն ունի, կամ վատ սովորութիւնից, որ արել են, միշտ իրանց վերայ խօսելու, ասում են ամեն մի մարդու, ով որ իրանց լսում է, խօսակիցներին ուշադրութիւն

պարձնել է ցոյց տալի. պատմուձեն թէ ինչ են արել ու չեն արել. ինչ դիտաւորութիւններ ունին՝ որ ուզուձեն առաջ տանել. ինչ բաների մէջ խելօք են գտնուել, ինչ բաների մէջ յիմարութիւն են արել: Ի՛նչպէս արհամարհելի է երևուձ մեզ միշտ մի այդպիսի անիսհեմ շատախօս մարդը:

Այլ նայնպէս մի էրկոսոնէական խոհականութիւն ևս կայ աշխարհ: Այս խոհականութիւնն այն պարտականութիւններից մէկն է, որով մարդս պարտական է իւր բարօրութեան ու հանգստութեանն: Թէ և բացատրութիւնը մի առաքինութիւն է, բայց մի առաքինութիւն, որ խոհեմութեան հետ միացած չէ, իւր պատուսուր անուանն իսկապէս արժանի չէ: Եթէ կուզես իսկապէս բաղդաւոր լինել, սովորիր բաղդաւորութիւնդ սրտիդ խորքի մէջը պահել: Զգոյշ եղիր, որ ուրիշներին, առանց վերջը մտածելու՝ իբր սիրտդ ուրախացնելու և հանգստացնելու համար՝ շուտ քո կարողութեան հանգամանքը չյայտնես պարծենալու միտքով: Դու քեզ վտանգի ես ենթարկում քեզի դէմ ուրիշի չկամութիւնն ունախանձը շարժելով այնտեղ, ուր դու գրէթէ չէիր կարծիլ: Զգուշացիր քո հանգամանքներիդ մասին, երբոր վատ են, առանց մտածելու, ուրիշներին մի բան իմացնելու, որովհետև դու վնաս կը բերես այն հաւատարմութեանն, որ մինչև այն ժամանակ ունէիր: Լեզուդ քեզ չը պահելովդ՝ այն միջոցներից կը զրկուես, որոնցով դեռ քեզ կարող էիր օգնել: Զգոյշ կաց ուրիշներին քո ծանրակշիռ դիտաւորութիւններդ անխոհեմաբար իմացնելու, որովհետև նոցանից շատերը իսկ դորանով տեսնուձեն իրանց նպատակներն ունայնացած, երբոր չարախնդալ մարդիկը ժամանակից առաջ իմանուձեն: — Լեզուդ քեզ պահիր, ու բերնիդդ բան մի հանիլ քո իսկ սխալանացդ մասին: Անանց այն էլ մի ունայն պարծանք է, երբոր մի մարդ իւր արած յիմարութիւններն իբրև իրան համար մի պարծանք է պատմում: Բայց շատ անգամ պատահուձէ, մանաւանդ միամիտ ու պարզասիրտ մարդոց մէջ, որ պարզ պարզ խօսուձեն այդ մասին օտարների առաջ: Ամենիւ մարդն, որ այդպիսի խոստովանութիւններ լսուձէ, թէ և համեստութեամբ ձայն չէ հանում, բայց անպատճիւ մարդն ընդ հակառակն աւելի է ստանում յարձանակ կանգնել մեր դէմ՝ մեր մասին աւելի զօրաւոր կերպով վնասակար բաներ խօսելու: Նա ուրիշների հետ մեր վերայ խօսելու ժամանակ, վերադիր անելով, մեր արած փոքրիկ թուլութիւնները յիմարու-

թեան չափ է մեծացնում՝ ու մեր սխալանքները՝ մոլութեան հաւասար երեւացնում։

Եթէ մի գաղտնիք ունիս ամեն բան էլ քեզ համար գաղտնիք լինի, որոյ յայտնութիւը ոչ ոքին օգուտ չի բերիլ, բայց քեզ միայն վնաս կհասցնի, սորվիր նոյնպիսի զգուշութեամբ քո սրտումդ պահել, ինչպէս որ դու ուրիշի գաղտնիքը բերնիդից չհանելու պարտական ես։ Ոչ որ իւր սրտի միջինը յիմարաբար բերնիցը հանումէ ու աշխարհի աչքի առաջը բաց դնում՝ թէ իւր անձը, թէ իւր բազդաւորութիւնը, թէ իւր հանգստութիւնը և թէ իւր ապագան ուրիշների կամայականութեանն է յանձնում։ Նա այնուհետեւ այլ եւս ազատ չէ, որովհետեւ կորցրեց իրան, և ով որ լիակատար ազատութեամբ գործել այլ եւս չէ կարող, այնպիսի մարդը երբէք ղօրաւոր կերպով գործ չէ տեսնում։ Մի հաւատար երբէք քեզանից ջոկ մի երկրորդ ու երրորդ մարդու աւելի՝ քան թէ քո անձիդ պէտք է հաւատաս։

Պարզ պարզ ասելն՝ առանց մի բան թաքցնելու՝ վայելուչ է միայն այնտեղ, ուր որ ծածկելը յանցանք է, ուր որ պարտականութիւն է, առանց ծածկելու իւր միտքը, իւր կարծիքները, իւր գատողութիւնը, իւր նպատակները ու իւր հանգամանքները ուրիշներին յայտնել, որպէս զի նոքա չխաբուին իրանց՝ մեր վերայ ունեցած ամենալաւ և ամենավատ կարծիքումը։—Քո գործերիդ մէջ խոհականութեամբ լուռթիւն պահիր ու մի խօսիր, բայց բոլորովին էլ բերանդ մի զմրիլ։ Ուր որ դու բարեյոյս սիրովն ես միայն խօսում, մեծ վտանգի չես հանդիպիլ, բայց մինչև անգամ անտարբեր բաների մէջը բերանը փակելն ու չը խօսելը, երբոր խօսքը մի արդար ու բարի բանի վերայ է, վատ կասկած է յարուցանում քո բնութութեանդ այդպիսի յատկութեան վերայ։

Մարգկային կենաց մէջ բոպէներ կան, որ լռելը ցաւալի ու կորած մարդու թուլասրտութիւն է։ Այսպէս կարող են մի թագաւորութեան մէջ մեծ շարժումներ լինել՝ թէ քաղաքի և թէ հասատոյ վերաբերեալ գործեր, ուր որ ամեն մի մարդ սուրբ պարտականութիւն ունի իւր գոյնը յայտնի անելու։ Ինչ որ մեր համոզմունքն է, նոյա վերայ հաստատ պիտի մնանք և աներկիւղ ամեն մի ժամանակ իրրև քրիստոնեայք՝ առանց անապարծութեան, առանց նենգաւոր ծածուկ մտքերի և առանց կրքոտ տաքութեան բայց և, առանց սաստիկ կերպով հշուելու մեր անձնական օգուտն։

երկու երեսանի մարդիկ, որոնք ոչ մէկի հետ վստահարդի լինել չեն ուզեցել, միշտ եղել են ու եղել աշխարհումս: Արդէն քրիստոնէութեան նոր տարածուելու ժամանակին, երբ որ ամենայն մարդոյ հոգիքը զգածուած էին զօրաւոր կերպով, արեգակի նման ծագող ճշմարտութիւնից, այն ժամանակին և այս անհաստատ և յերկուս հետս կազացող մարդոց մասին յիշողութիւն է լինում, որոնց մասին Սուրբ գիրքը բարձրաձայն ասում է: « Եա՜ ես էլ դէմ եմ, որովհետև դու՝ ո՛չ պաղ ես և ո՛չ տաք»: Եւ ինչպէս որ այն ժամանակն էր, այնպէս էլ այժմ է: Մենք այնպիսի մարդոց համարումենք ժամանակակցաց մէջ ամենից ներհամերհուածների կարգումն: Որոյ սիրտը չէ տաքանում մի աւելի բարձր գաղափարով, որ գերազանց լինի իւր համար քան թէ իւր տունն ու իւր գործերը, նա ցոյց է տալիս պարզ կերպով, որ իւր համար սէրը դէպի իւր հայրենիքը, սէրը դէպ ի մարդկութիւնն ու աստուածայինը դատարկ խօսքեր են՝ ղօղանջող ծնծղաների նման. որ նա իւր ինքնասիրութեան մէջ քարացած է: Ահեղայն քան իւր ժամանակն ասէ՝ ընկ լեւն. Ե ընկ խօսելը: « Խորագէտ լինել օձերի նման և միանգամայն մեամիտ՝ աղաւնիների նման », քո աշակերտացդ այս պատուիրեցիր, ով Յիսուս Քրիստոս, դու, կեանքի մեծ Ուսուցիչդ, և զգումեմ ես թէ՝ որչափ մեծ կշիռ ունի մեր համար՝ որ մեք ուրիշ մարդոց բաղդաւորութեան համար մեր լեզուն իմաստուն կերպով գործածենք, ժամանակին ու տեղին համեմատ խօսենք, ժամանակին ու տեղին մոխիկ տալով, լռենք: Զգումեմ՝ թէ ինչպէս առաքինութիւն չէ ամենևին անխորհուրդ բայաարատութիւնը, որպէս և որչափ անարգ ու գօրովելի՝ իւր համոզմանը մատնիչ լինելը: Ուրեմն իմ քրիստոնէական պարտականութեանցս առաջինը լինի մարդոց հետ իմ ունեցած յարաբերութեանցս ու վարմանցս մէջ թէ զգուշաւոր լռութիւնը և թէ ճշմարտութեան համար համարձակ խոստովանութիւնս իւր ժամանակին ու տեղին: Վասն ղի իմ պարտականութիւնս է, ոչ իմ Փրկիչ, իմ Աստուածայինն սիպարս, քո տուած օրինակին հետևելով, իմ շուրջս եղած աշխարհը բաղդաւորեցնել, որչափ որ այժս հասնի գործելու: Սորվեցո՛ւր ինձ այն անել, ինչ որ դու արիր: Ցոյց տուր ինձ իրաւանց և արդարութեանց շաւիղը, որ ես մուտ հանդամանացս օրերի մէջ և այ քեզ արժանի կերպով ընթանամ: Ինձ քո խմաստութեան հոգուոլը լից, որ ես ամեն տեղ թէ խօսելու և թէ լռելու ժամանակը՝ չափ ու սահմանից դուրս չգամ:

(Թարգմ.) Գ. Ե. Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

(Շարունակ. Ա. էջ 44, 1885 Ը. բ.)

Գ.Լ. Կ.

Յովհան Մանդակունեան յաջորդեց իւր աշակերտն Բաբգէն՝ վանանդայ Ոթմանոյ գիւղից։ Վահանի մարզպանութեամբ առ վայր մի դադարած լինելով եկեղեցու հալածանքը, ինչպէս Հայք, նոյնպէս և Վիրք և Աղուանք սկսեցին եկեղեցու սլայծառութեան համար հոգալ։ Աղուանից Շուփհաղիշէ կաթուղիկոսը սեղանոյն Վաչագան Հայկազուն թագաւորի աջակցութեամբ բարեկարգումեր եկեղեցիքը և քայ էր անում ու կարգաւորում դպրոցները։ Վաչագան թագաւորը ժողովրդի մէջ քրիստոնէական հաւատի սէրը արծարծելու համար եկեղեցական դասի օգնութեամբ գտաւ Ամարաւում Աղուանից առաջին կաթուղիկոս Գրիգորիսի մարմինը, որի պատճառով Աղուանից ու Հայոց եկեղեցիքը տօն հաստատեցին, և վայելուչ հանդիսով ու ուխտագնացութեամբ կատարումէին իւրաքանչիւր տարի։ Փոքր ինչ անգորացած եկեղեցու խաղաղութիւնը երկար չըտևեց, վասն զի Քաղկեդոնի ժողովը իւր հետևանքներով երկար ժամանակ յուսնական և հռոմէական եկեղեցիքը յուզելուց յետոյ՝ սկսեց ոտքառնալ Հայկական եկեղեցուն և՝ որի մասունքն էին Աղուանից և Վրաց եկեղեցիքը։ Բաբգէն այս վրդովմանց առաջքը առնելու համար 491 թ. գումարեց Վաղարշապատու ե. ժողովը որին ներկայ էին Աղուանից Շուփհաղիշէ ու Վրաց Գաբրիել կաթուղիկոսները իրանց եպիսկոպոսներով, բազմաթիւ երևելի անձինք և յոյներ։ Ժողովը միահաւան վճռով որոշեց նզովել Բարծումա պարսիկ աղանդաւորին և նեստորականներին՝ որոնք սկսել էին իրանց հերետիկոսութեան որոմը սերմանել Հայաստանում. այլ և որոշեց հետևել միայն առաքելոց գրուածքներին ու երեք սինհեդրական ժողովների սահմանադրութեանցը, և մերժել Քաղկեդոնի ժողովը, ի նկատի ունենալով նախ սրա, նոյն ինքն յոյնք և հռոմայեցիք տարակուսում էին այդ ժողովի [սահմանած վարդապետութեան ուղղափառութեան համար, և ժողովի մասին երկար տարիներ

շարունակուող մէճը երկպառակել էր Քրիստոսի մի եկեղեցին՝ մինչև անգամ արիւնհեղութեանց տեղի տալով. երկրորդ որ, բազմաթիւ եպիսկոպոսներ եկեղեցու վարդապետութիւնները անթերի սահմանուած տեսնելով Նիկիոյ, Կ. Պոլսոյ և Եփեսոսի տիեզերական ժողովներուն սահմանադրութեամբ՝ իրանց ստորագրութեամբ և Զենոն կայսեր հրովարտակով շրջաբերական էին հրատարակել՝ — ապաջադրելով բաւականանալ միայն նախկին երեք տիեզերական ժողովներով, և բացի այդ երեք ժողովներից՝ ոչ մի ժողով չընդունել:

Հայաստանեայց եկեղեցին մերժելով Քաղկեդոնի ժողովը ապահովեց այն ազանձնուիրութիւնը, որ մինչև ցայսօր պահել է, և այդ ազանձնուիրութեամբ միայն կարողացել է և ոլիտի կարողանայ յարատևել իբրև ազգային եկեղեցի: Քաղկեդոնիկ յոյն և հռոմէական եկեղեցիքը տեսնելով որ Հայաստանեայց եկեղեցին ժողովով մերժեց Քաղկեդոնի ժողովը, սկսեցին մախանքով նայել նորա վերայ և հերձուածող ու հերիւրիկոս համարելով՝ պարսիկների հետ միասին՝ անողորմ անգթութեամբ հալածել, մինչև բնաւրմը զնելով, կամ ջնջել բնաւին և կամ իրանց հետ միացնել: Բայց Հայաստանեայց եկեղեցին որպիսի քաջութեամբ դիմադրել և դիմադրութեան միջոցներն էին քաջութեամբ պատերազմ և ի սէր ազգի ու եկեղեցւոյ նահատակութիւն:

Վաղարշապատի ժողովից մի տարի յետոյ 492 թուին վախճանեց Բասգէն և յաջորդեց Բզնունեաց Սրճկէ գիւղից Սամուէլ՝ որի օրով Վաղարշ Պարսից թագաւորը գահընկէց եղաւ և Կաւատ թագաւորելով՝ նորից սկսեց հալածանք: Կաւատի հրամանով պարսիկ մարզպանի հետ բազմաթիւ մոգեր մտան Հայաստան, սկսեցին կրակատուններ շինել և բռնութեամբ ու մեծամեծ խոստումների հրապոյր ու պատրանք, իսկ դիմադրութեան միջոցներն էին քաջութեամբ պատերազմ և ի սէր ազգի ու եկեղեցւոյ նահատակութիւն:

Վաղարշապատի ժողովից մի տարի յետոյ 492 թուին վախճանեց Բասգէն և յաջորդեց Բզնունեաց Սրճկէ գիւղից Սամուէլ՝ որի օրով Վաղարշ Պարսից թագաւորը գահընկէց եղաւ և Կաւատ թագաւորելով՝ նորից սկսեց հալածանք: Կաւատի հրամանով պարսիկ մարզպանի հետ բազմաթիւ մոգեր մտան Հայաստան, սկսեցին կրակատուններ շինել և բռնութեամբ ու մեծամեծ խոստումների հրապոյրներով ու պատրանքով թիւրացնելին որոյալ: Վահան ուխտապահների հետ եկեղեցու ախոյեան հանդիսացաւ. հարուածեց պարսիկներին և կործանեց կրակարանները: Կաւատ շուտով զգաց վրէժխնդիր լինել Վահանի դէմ, բայց ներքին խռովութեան ժամանակ գահազրկուեցաւ. Անյուշ բերդն ուղարկուելով՝ չկարողացաւ հասնել իւր նպատակին:

502 թ. վախճանումէ Սամուէլ կաթուղիկոս և հետ զհետէ յաջորդումեն Կոստէից Այլաբեր գիւղացի Մուշէ և 510 թուին, Հարք գաւառի Ուղկայ գիւղացի Սահակ Բ. որի իշխանութեան առաջին տարին 25 ամեայ մարզպանութիւնից յետոյ բարի մահուամբ վախճանումէ Վահան Մամիկոնեան յաջորդ թողնելով իւր Վարդ եղբայրը։ Սահակ կաթուղիկոսին, նորա հնգամեայ իշխանութիւնից յետոյ հայրապետական իշխանութեան հետ զհետէ յաջորդեցին Բագրեւանդայ Տիրատիճ գիւղից Քրիստափոր Բ. 6 տարի, Առբերանոյ Եռաստ գիւղից Ղեւոնդ՝ 3 տարի և 524 թուին Բագրեւանդայ Աշտարակաց գիւղից Ներսէս Բ. 9 տարի։ Ներսէս Հայոց Մեծ Դիւանում մարզպանութեան 6-րդ տարին կաթուղիկոս ընտրուեց, և եկեղեցականները իւ զգուշութեան պահելու ու եկեղեցին բարեկարգելու համար 527 թուին Դվինայ Բ. ժողովը գումարեց, ուր էին Մամիկոնեանց Ներշապուհ և Սիւնեաց Պետրոս նշանաւոր եպիսկոպոսները։ Ժողովը բարեկարգութեան ԼԸ. յօդուած կանոն հաստատեց՝ որոշելով իւրաքանչիւր ամիս պահել մի մի պահք, որք են՝ Ա. Եղիսկան, Բ. Ս. Լուսաւորչի (ամառայնոյ), Գ. Վարդավառի, Դ. Ս. Աստուածածնի, Ե. Ս. Խաչի, Զ. Վարագայ Խաչի, Է. Յիսնակաց, Ը. Ս. Յակոբայ (Ձմերայնոյ), Թ. Յայտնութեան, Ժ. Առաքելոցաց, ԺԱ. և ԺԲ. պահքեր՝ կիս քառասնորդաց։

Ներսէսին՝ նորա վախճանից յետոյ յաջորդեց Գաբեղեան գաւառի Սիւնձեղուան գիւղացի Յովհաննէս Բ. որի ժամանակ գտնուեց Յիսուսի Անձեռագործ պատկերը կամ Դասատառակը, որ Աբգար նախահաւատ թագաւորը ստացել էր Փրկչից ի լրումն վիպագոնոց, և որ Ագդէ՝ Անտիոքի հալածանաց ժամանակ զետեղել էր քաղաքադրան որմի մէջ եդեսիայում։

Յովհաննէս Բ. Կաթուղիկոս Յունաց և Պարսից խռովութեանց ժամանակ Պարսից Կոմսից իբրև խաղաղութեան միջնորդ գնաց Փոքր—Ասիոյ Յունաց զօրավարի մօտ, բայց առ որս իւն. որովհետև յոյները այս բանը Պարսից տկարութեան նշան համարեցին և արշաւեցին նոցա վերայ Հայաստանի միջից անցնելով՝ որ ոչ սակաւ վնասուց պատճառ եղաւ. վասն զի Պարսից դուռը Յունաց անցքը Հայաստանի միջով՝ ընդ միշտ խափանելու համար Մժէժ Գնունու մահից յետոյ ամն Դենշապուհ պարսիկ իշխան մարզպան կարգեց և դարձեալ սկսեց հալածանքը բազմաթիւ մոգեր ուղարկե-

լով Հայաստան, կրակառուններ շինելով և Հայերին ի կրակապաշտութիւն ստիպելով. իսկ Հայք հաւատարիմ իրանց մայրենի եկեղեցուն զիմադրուէին: Հալածանաց այս խռովութեանց ժամանակ 17 ամեայ իշխանութիւնից յետոյ վախճանեց Ցովհաննէս Բ. Կաթուղիկոս և յաջորդեց Արագածոտն գաւառի Եղիվարդ գիւղացի Մովսէս:

Մովսէս քրիստոնէութեան հալածանքի առաջը առնելու համար թուղթ գրեց պարսից Խոսրով Թագաւորին՝ յիշեցնելով վահանի ձեռքով եկեղեցու և քրիստոնէութեան ազատութեան հաւատ ուրացած հրովարտակը. Խոսրով ընդունելով հայրապետի թախանձանքը՝ պաշտօնանկ արեց Դենշապուհին և դարձայրեց հալածանքը:

Մովսէս այսպէս եկեղեցին ազատ յետոյ առաջին գործ արեց վախճան տալ Ցիսուսի ծննդեան հինգհարիւրամեակի առիթով ծագած շփոթութեանց, կարգաւորելով տօմարը՝ որին արդէն ձեռնարկել էր Գլակայ առաջնորդ Աթանաս: Այս իսկ նպատակով գումարեց Դվնայ Գ. ժողովը 551 թուին: Այս ժողովում կարգի դրուեց Հայոց տօմարը և Հայոց նոր թուական սկսուեց:

Մովսէս կաթուղիկոսի վերահաստատած խաղաղութիւնը Հայք երկար չը վայելեցին. վասն զի Ցունաց և Պարսից մէջ ծագած պատերազմների ժամանակ Հայք պարտաւորուած էին Ցունաց կամ Պարսից օգնել և հակառակ կողմի վրիժառութեան ենթարկուել: Պարսից Խոսրով թագաւորը տեսնելով որ Հայք իբրև քրիստոնեայ ազգի դէպ ի յոյներն են հակուած՝ բազմաթիւ զօրքերով մուտ Հայաստան, շատ ապստամբութիւններ արեց և կամենումէր Ցունաց բաժինն ևս նուաճել. ի վրէժխնդրութիւն վարդան Բ. Մամիկոնեանից կրած բազմադիմի հարուածների՝ գրեթէ աւերակ դարձրեց Տարօնոյ աշխարհը և նոյն աւերը կամենումէր հասցնել բոլոր աշխարհին, բայց բարեբաղդաբար խօթութեան մէջ ընկաւ և Պարսկաստան վերադարձաւ. ուր, ինչպէս գրուածներն պատմիչները, նախ քան վախճանելը ընդունեց քրիստոնէութիւն: Խոսրովին յաջորդումէ իւր որդին Որմիզդ որ շատով գահընկէց է լինում յաջորդ թողնելով իւր Խոսրով բ. որդին: Խոսրով ներքին երկպառակութիւնը Ցունաց և Հայոց ձեռնտուութեան կարգի դնելուց յետոյ՝ Սմբատ Բագրատունուն 593 թ. նշանակումէ մարզպան Հայոց:

Սմբատ Բագրատունի մարզպանական իշխանութեամբ ճոխացած երբ Պարսկաստանից վերադառնումէր Հայաստան՝ վրկանայ

աշխարհից անցնելիս՝ տեսաւ որ տեղւոյն Հայ ժողովուրդը մոռացել է իւր մայրենի լեզուն և քրիստոնէական պարտաւորութիւններից շատ շատերը, ուստի ամն Աբել երէցի Մովսէս կաթուղիկոսի ձեռնադրութեամբ Վրկանայ եպիսկոպոս նշանակեց, Հայ դպրութեան դպրոցներ հաստատեց և ուսուցիչներ կարգեց, որով Վրկանք և միացան Հայոց հետ և Հայաստանեայցս եկեղեցւոյ Հայրապետի մի թեմը կազմեցին։

Ամբատ պետ Հայաստան չէր հասել Մովսէս կաթուղիկոս խարին Ծերութեան մէջ 30 տարի անձամբ և 13 տարի և-ս ամն Վրթանէս վարդապետի տեղապահութեամբ հայրապետական իշխանութիւնը վարելուց յետոյ վախճանեց։ Հայք հայրապետի ընտրութեան համար երկպառակուեցին, ոմանք տեղապահ Վրթանէսին էին կամենում կաթուղիկոսացնել, այլք՝ մի ուրիշը, և իմանալով որ Սմբատ մարզպանական իշխանութիւն ստացած վերադառնում՝ սպասեցին։ երբ Սմբատ հասաւ, Ռշտունեաց Սբրահամ եպիսկոպոսին ընտրեցին կաթուղիկոս։ Վրայ հետ բանակցութիւնները, որ սկսբում շարունակուեցին տեղապահ Վրթանէս վարդապետի ձեռքով, շարունակուեցին Աբրահամ կաթուղիկոսի միջոցաւ և-ս, որի օրով տեղի ունեցաւ Վրաց քաժանումը՝ իրանց Կիւրոն կաթուղիկոսի ձեռքով յամի Տեառն 590։

Բ. ԺՈՂՈՎ ԴԱՆԱՑ.

Դմնայ երկրորդ ժողովը գահերիցութեամբ Ներսէս Բ. կաթուղիկոսի, մանաւանդ գիւղական եկեղեցականների ուղղութեան համար կանոն է հաստատում 38 յօդուածով՝ որք են.

Ա. Քահանաների տուրքը տանել եկեղեցին և ոչ թէ մի որ և է քահանայի տունն։

Բ. Պատարագի ողորմութեան տուրքը քահանաները առնեն առանց ղօշաքաղութեան։

Գ. Եկեղեցու տուրքը վաշխով չը տրուի։

Դ. Քահանայութեան կոչումը չըվաճառուի, և աշխարհականները քահանայի պաշտօն կատարել չըհամարձակեն։

Ե. Կրկին ամուսնացեալները հեռանան եկեղեցական կոչումից, և եկեղեցու հասոյթ չըվայելեն։

Զ. Քահանաները շաբաթ և կիւրակէ օրերը Ս. պատարագը չըխափանեն. ոչն օրերին պաշտամունքից չըծուլանան, և եթէ այնիսոյթ գտնուին՝ զըրկուեն օրուայ հասոյթից։

Լ. Քահանաները չքաւորութեան պատճառով սուրբ հաղորդութեան բաժակը չընուազեցնեն։

Ը. Ս. Հաղորդութիւնը ժողովրդին մատակարարելիս՝ նոր գինի չաւելացնեն։

Թ. Խորանի վարագոյրը չըտան հարսանեաց գործածութեան համար։

Ժ. Քահանաները մկրտութեան ջուրը չըտան ուրիշներին, մանաւանդ կանանց՝ տանը պահելու և երեխաները մկրտելու։

ԺԱ. Քահանաների մէջ յառաջագոյն ձեռնադրուածը համարուի նախագահ։

ԺԲ. Դպիրները եկեղեցում առանց քահանայի չըհամարձակին ժամերգութիւն կատարել։

ԺԳ. Քահանաները աշխարհականների կամ գինուորների զգեստ չըհամարձակին հագնել։

ԺԴ. Եկեղեցու տուրքը բաժանուի ըստ օրինի. երկու և կէս մասն՝ աւագ քահանաներին, երկու մասը՝ հասարակ քահանաներին, մի և կէս մասը՝ սարկաւագներին. դպիրներին, այրի կանանց և եթէ կարօտներ կան՝ մի մի մասն։

ԺԵ. Եկեղեցու սպասները լինին աւագ քահանայի ձեռքը, որ բնաւ աշխարհական բաներով չը պէտք է զբաղուի։

ԺԶ. Մկրտութիւնը եկեղեցում, Ս. աւազանի մէջ լինի բոլոր պատրաստութեամբ, և եթէ միայն վտանգ լինի՝ տանը կատարել։

ԺԷ. Մկրտութեան ժամանակ, ի տեղի սարկաւագի՝ կանայք չը լինին սպասաւորելու։

ԺԸ. Առանց հարկի ստիպման սարկաւագները չըհամարձակին մկրտութիւն անել։

ԺԹ. Քահանաները չըհամարձակին տուրքով կատարել ապաշխարութեան խորհուրդը։

Ի. Եթէ քահանան ապաշխարողների խոստովանանքը յայտնի, նզովքով կարգալոյծ լինի։

ԻԱ. Եկեղեցում հասարակ գերեզման չը լինի։

ԻԲ. Քահանայք չըհամարձակին վաշխ առնել։

ԻԳ. Աղքատների համար նուէրքը քահանաները ըստ կամաց չըբաժանեն. այլ ընծայողի ներկայութեամբ բաժանեն աղքատներին։

ԻԴ. Հաղորդուողները ծոմ լինեն. ի հակառակ դէպս, եթէ քահանան կամ եկեղեցականները գիտենան, չըթողնեն հաղորդուել։

ԻԵ. Փոքրահասակներին չըպսակել. չըպսակել նաև չափահասներին՝ եթէ միմիանց նախապէս չեն տեսած։

ԻԶ. Առանց հարկի՝ կոյսը այրի և այրին կուսի հետ չըպսակուի։

ԻԷ. Քահանաները չըհամարձակին ընտրել ողորմութեան կամ նուէրքի համար արջառ։

ԻԸ. Քահանայք չըհամարձակին նուիրուած անասունը կենդանի պահել, այլ մորթել և աղքատներին բաժանել տան։

ԻԹ. Քառասնորդաց և Առաջաւորաց պահքը ոչ ոք չըհամարձակի լուծանել։

Լ. Ճրագալուցի շաբաթ օրը առանց տկարութեան հարկի ոչ ոք չըհամարձակի նախ քան Ս. պատարագը հաղորդուիլ։

ԼԱ. Ծողովրդականը չըհամարձակին քահանայի հակառակ հրամաններ տալ։

ԼԲ. Արբեցող սրիկաներին ընկերակցող քահանայ չըլինի. քահանան արծաթագին աղախին չունենայ, և անուրը վաստակից տուրք չըստանայ։

ԼԳ. Կով կթելու կամ հաց եփելու և կամ ո և է գործի համար կին չըմտնի, բացառեալ վանքը

ԼԴ. Անապատականները արևի մտնելուց առաջ դառնան իրանց անապատը։

ԼԵ. Վանականները աշխարհականների տանը չըկենան, և եթէ մծոիկ վանք չկայ՝ աւագ երէցի տանը կենան։

ԼԶ. Վանականները չըհամարձակին վաճառականութիւն անել և առանձին ձի կամ այլ ինչ պահել։

ԼԷ. Աղանդաւորներին տուն չըթողել։

ԼԸ. Իւրաքանչիւր ամսում մի մի պահք պահուի։

ԳԼ. Պ.

Քրիստոնէութեան Հայաստանում հաստատուելուց յետոյ՝ Աղուանից և Վրաց եկեղեցիքը Հայաստանեայց եկեղեցու լման և ընդարձակ թեմերն էլին կազմում. եկեղեցական ժամակարգութիւնը թէև իրանց լեզուովն ու աղգային աւանդութիւններով էին կատարում, բայց ի հաւատոյ մի լինելով Հայաստանեայց եկեղեցու հետ՝ հայ հայրապետի բարձրագոյն հոգևոր իրաւասութեանն էլին ենթարկուում։ Վրայիք և Աղուանք ունէին իրանց յատուկ կաթուղիկոսները, որոնք Ս. Լուսաւորչից օրհնեալ ընտրուելուց յետոյ Ս. օծում և կաթուղիկոսական իրաւունքը առնում էին Հայաստանեայց ընդհանրական հայրապետից, և այս միութեամբ երեք ազգերը կազմում էին ըստ հոգևորին՝ մի Հայաստանեայց եկեղեցի։

Մոմիկ Եղիսաբեթեցու օրով Վրայիք իրանց կաթուղիկոսի մահուանից յետոյ երկսաւակուեցին և գժուարանում էին կաթուղիկոս ընտրել, ուստի այս երկպառակեալ դրութիւնից դուրս գալու համար դիմեցին Մոմիկ կաթուղիկոսին խնդրելով կաթուղիկոս նշանակել, ում որ կըկամենայ։ Մոմիկ Վրաց հաճութեամբ Աբրահամ քորեպիսկոպոս և կաթուղիկոսական եկեղեցու վանեցի, ազգաւ Վրացի, Յուսիկ գաւառի Սկուռը գիւղից Կիւրո-

նին, որ Համուտ էր Հայ, յոյն, պարսիկ և վրացի դպրութեան՝ օծեց Վրաց կաթուղիկոս։

Կիւրոն Հայոց Հայրապետանոցում՝ ընդ երկար կեղծելուց յետոյ, երբ կաթուղիկոսանալով վերադարձաւ Վրաստան՝ սկսեց սկզբում՝ նեստորականների հետ մտերմութիւն, բայց յանդիմանուելով իւր բարերար Մովսէս Հայրապետից՝ յետ կացաւ. յետոյ սկսեց հակուել դէպ ի քաղկեդոնականութիւն, որի մասին իրանից ձեռնադրուած Յրատասյ Մովսէս եպիսկոպոսը տեղեկութիւն հաղորդեց Հայ Հայրապետանոցին։ Բանակցութիւնը Հայ Հայրապետանոցի և Կիւրոնի մէջ շարունակվում էին մինչև Մովսէս Հայրապետի մահը, որից Կիւրոն պատկառելով կեղծուէր թէ, ինքն Հայաստանեայց եկեղեցու միութիւնից հեռանալու դիտաւորութիւն չունի։ Բայց երբ Աբրահամ՝ կաթուղիկոս յաջորդելով Մովսէսին՝ սկսեց շարունակել բանակցութիւնը, մի քանի վոխադարձ գրութիւններից յետոյ Կիւրոն յայտնեց իւր՝ Քաղկեդոնի ժողովին հետևող լինելը։ Աբրահամ՝ կաթուղիկոս Կիւրոնի անդառնալի անջատումն տեսնելով՝ 597 թ. Դվնայ Դ. ժողովը գումարեց, ուր Կիւրոնին ու նորա հետևողներին Հայաստանեայց եկեղեցուց հերձեալ հրատարակեց և շրջաբերական թուղթ ուղղեց դէպի բոլոր հաւատոյեալները՝ Հայաստանեայց եկեղեցւոյ վարդապետութիւնն համառօտելով նախկին երեք տիեզերական ժողովոց համեմատ և, յիշելով Քաղկեդոնի ժողովի մանրամասնութիւնը ու Վրաց անջատումն՝ առաջարկեց հետևի կենալ Վրաց հետ հաղորդակցութիւնից)։*

Կիւրոն այս բանը հասկրեց ի լուր Ծունաց կայսեր, որ հրամայեց Հայ և քաղկեդոնիկ հոգևորականաց մասնակցութեամբ ժողով գումարել Կ. Պօլսում։ Ժողովը կայացաւ. ներկայ էր նաև Մովսէսի և նորա մահից յետոյ Աբրահամ կաթուղիկոսի տեղակալ Վրթանէս։ Ժողովը աղմկալից վախճան ունեցաւ և այս աղմուկը ընդերկար տեւեց. վասն զի Ծունաց հպատակ Հայերից ոմանք առ ահի ընդունել ձևացրին Քաղկեդոնի ժողովը, իսկ պարսից հպատակ Հայերը բնաւին մերժեցին, որով սկսուեց նեղքին կրօնական վէճ։ Ծունաց կայսրը տեսնելով թէ անհնար է Հայկական եկեղեցուն Քաղկեդոնի ժողովը ընդունել տալ, Ծունաց բաժնի վերայ հակաթոռ կաթուղիկոս կարգեց ոմն Ծուխան՝ Կոդ գաւառի Բա-

(*) Ուխտանէս Եպիսկ. եր. 132—36. տպեալ ի Ս. Էջմիածին 1871 թ.

գարան գիւղից։ Ա.յս հակաթոռ կաթուղիկոսը բնակութիւն հաստատեց Կոտէից գաւառի Աւան գիւղաքաղաքում, որպէս զի Դըվինայ մայր աթոռին մօտ՝ միշտ մրցութեան մէջ մնայ և անընդհատ ճարակ տայ երկպառակութեան։ Ա.յսպէս էլ եղաւ. Յովհան հակաթոռ կաթուղիկոսը մինչև իւր մահը քար գայթակղութեան և որոմն խռովութեան մնաց։

Աբրահամի կաթուղիկոսութեան վերջին տարիներում Պարսից Խոսրով Թագաւորը տեսնելով որ Յոյնք կրօնական և քաղաքական խնդիրներով երկպառակեալ են, 614 թուին արշաւեց դէպ ի Պաղեստին, առաւ Երուսաղէմ քաղաքը և 30,000 անձանց հետ գրեց տեղւոյն Չաքարիա պատրիարքին ու Փրկչի սուրբ խաչը, որ դրեց մեհեանում ի նախատինս Հերակլ կայսեր։

Աբրահամ կաթուղիկոս 23 տարի ամենայն արժանաւորութեամբ հայրապետական իշխանութիւն վարելուց յետոյ 617 թուին վախճանեց և տեղը յաջորդեց Մամիկոնեանց Տարօնոյ եպիսկոպոս և Գլակայ առաջնորդ Կոմիտաս՝ որ Արագածոտն գաւառի Աղց գիւղից էր։ Կոմիտաս սկզբում Ս. Հռիփսիմէի վանայ վանական լինելով, իւր կաթուղիկոսութեան երկրորդ տարին սկսեց այդ վանքը ի հիմանէ շինել աւելի ևս ընդարձակ և վայելուչ. և գտնելով սուրբ կուսանաց մնարմինները կնքեալ Լուսաւորչի ու Ս. Սահակայ կնիքներով՝ ինքն ևս կնքեց և զետեղելով աւագ խորանի տակ՝ ի պատիւ սուրբ կուսանաց երգեց «Անձինք նուիրեալք» շարականը։ Այնուհետև Կոմիտասը Կաթուղիկէ Ս. Էջմիածնայ վայրաշէն գմբէթը քանդեց և շինեց գեղեցիկ կոփածոյ քարով։ 618 թ. Կոմիտաս եօթնամեայ արգիւնաւոր կաթուղիկոսութիւնից յետոյ վախճանեց և տեղը յաջորդեց Վարազփրոց մարզպանի, Թէոդորոս Ռշտունու և այլ նախարարների հաճութեամբ ու ազգի հաւանութեամբ Ապահունեաց գաւառից Քրիստափոր Գ. որ ազատ տանից էր։ Քրիստափոր Գ. մի խստակրօն ու անձնուրաց մարդ էր. նա անաչառութեամբ յանդիմանում էր բոլորին զեղծումները, ուստի և շատով բոլորին ևս աւելի դարձաւ, և իմանալով որ մեծամեծները կամենում էին գահընկէց անել նրան, ինքն կամովին, երեքամեայ կաթուղիկոսութիւնից յետոյ հրաժարուեց, և Մասիս տարի տուրուսում, Ուղեայց գիւղում մի վանք շինելով այնտեղ կրօնաւորական կեանք սկսեց վարել մինչև իւր վախճանը։

Քրիստափորին յաջորդեց Եզր, որ Նիգ գաւառի Փառաժնա-

կերա գիւղին էր։ Եղր կաթուղիկոսարանումն էր մեծացած և Ս. Գրիգորի եկեղեցու փակակալն էր՝ երբ ընտրուեց կաթուղիկոսոտյա կաթուղիկոսութեան առաջին տարին Յունաց Հերակլ կայսրը Քրիստոսի սուրբ խաչը գերութիւնից ազատած Պարսից պատերազմից վերադառնալով՝ Կարին քաղաքում Հայոց և Յունաց եկեղեցականներից գառառական ժողով գումարեց Քաղկեդոնի ժողովի Համար։ Այս ժողովում ներկայ գտնուեց նա և Եղր, որին կայսրը Մաժաժ Գնունու ձեռքով ազդարարեց ընդունել Քաղկեդոնի ժողովը՝ ապա թէ ոչ՝ պէտք է յունական բաժնի վերայ ուրիշ կաթուղիկոս նշանակի։ Այս ժողովին թէև չը կարողացաւ մասնակցել Մաթուսաղայ վարդապետը, երանաւորի վարդապետարանի (Կամրջաձորոյ վանք) գործերով զբաղուած լինելով, սակայն դաւանութեան գիր ուղարկեց, որ ժողովի վիճաբանութեանց ժամանակ կարդացուեց Յունաց դաւանագրի հետ, որին ստորագրել էր ինքն կայսրը։ Ուր ուրեմն Եղր վախենալով կայսրից՝ ընդունեց Քաղկեդոնի ժողովը, և ի տրիտուր՝ պարգև ստացաւ Կողբայ աղահանքը։

Եղր Քաղկեդոնի ժողովը ընդունելու Համար մեծամեծ պարգեւներով ու շքով ճոխացած՝ վերադարձաւ Հայաստան, և Դուին մտնելիս՝ երբ ըստ սովորութեան եկեղեցու ուխտը ընդ առաջ էր դուրս եկել՝ Ս. Գրիգորի եկեղեցու փակակալ Յովհաննէս Վարդապետը, իմանալով թէ Եղրը ընդունել է Քաղկեդոնի ժողովը ընդ առաջ դուրս չեկաւ և ոչ եկեղեցում երևեցաւ։ Եղր նկատելով այս՝ իւր մօտ կանչեց, և երբ յանիմանութեր, Յովհան վարդապետը պատասխանեց թէ «չի կարող լինքն խոնարհել նորան, որ քանդել ուղղափառ հարց կանոնը»։ այլ և ասաց։ «Անունդ յիրաւի Եղր կոչուեց, վասն զի մեզ—Հայաստանեայցս՝ եղր հանեցիր, մեր ուղղափառ հայրերի հաստատ սահմանը քանդելով։»

Եղր բարկացած եկեղեցուց արտաքսեց, հրամայեց ծեծել և հեռացնել Յովհանին, որ գնաց Նիգ գտաւը, Բջնւոյ մօտ, Մայրավանք և սկսեց այնտեղ կրօնաւորական կեանք վարել։ բայց Եղր այն տեղից և ս հալածեց, առ ատելութեան վանքը մայրագոմ՝ իսկ Յովհան վարդապետին մայրագոմեցի անուանելով։ Յովհան գնաց Աղուանից Գարդման գաւառը, ունեցաւ բազմաթիւ աշակերտներ՝ որոնցից մէկը Սարգիս անուամբ չարաչար մոլորութեան մէջ ընկաւ։ Յովհանի հակառակորդները այս մոլութիւնը նորան և ս էին վերագրում։

Միայն Յուլհան չէր որ ընդդէմ էր Եզրին, Հայք տեսնելով որ Քաղկեդոնի ժողովը ընդունելով բոլոր եկեղեցական կարգ ու կանոնները փոխուում են. Ծննդեան և Հրագալուցի տօները սահմանեալ օրը չեն տօնուում, Ս. Հաղորդութեան բաժակի հետ ջուր են խառնում, «Սուրբ Աստուածը» առանց «խաչեցար»ի են երգում՝ սկսեցին աւելի և աւ զայրանալ. բայց ի բաց մերժեցին Քաղկեդոնի ժողովը՝ արհամարհանաց ենթարկելով Եզրին, նորա անունը առ ատելութեան Հայրապետաց շարքում Թարս (ձիմ) գրելով:

Մահմետականութեան սկզբնաւորութեամբ Հայաստանեայցս եկեղեցուն մի զօրաւոր թշնամի և աւելացաւ: Մահմետականութիւնը հրէականութեան սկզբամբ և արիոսականութեան խառնուածով մի ազանդ է: Այս ազանդի հիմնադիրն է Մահմէտ՝ որ 622 թուին սկսեց քարոզել, և բազմաթիւ հետևողներ վաստկելով՝ կազմեց մի հզօր տէրութիւն, որի նպատակն էր մահմետականութիւն կամ մահ: Մահմէտ իւր տէրութիւնը հաստատեց Արաբիայում, ուր էին նորա ծննդեան և սխրագործութեան տեղի՝ Մէքքէ և Մեդինէ քաղաքները: Մահմէտ մեռաւ 631 թուին, իսկ նորա յաջորդն Աբուբէքիր իւր աթոռը փոխադրեց Դամասկոս. վերջապէս Բաղդատ գարձաւ մայրաքաղաք Մահմէտի յաջորդների, որոնք Խալիֆայ էին կոչվում:

Խալիֆների իշխանութիւնը այնպէս զօրացաւ՝ որ Յունաց կայսերութիւնը պարտաւորուեց իւր իշխանութեան շատ գաւառներից ձեռք վեր առնել, մինչև անգամ Երուսաղէմից, միայն Քրիստոսի սուրբ խաչը Կ. Պօլիս փոխադրելովը բաւականանալով*). իսկ Պարսից ի ներքուստ քայքայուած թագաւորութիւնը կործանուեց և ընդունելով նաև մահմետական կրօնը գարձաւ խալիֆների իշխանութեան մի գաւառ:

Մահմետական հրոսակները սուր և հուր էին տեղում ամենայն տեղ: Այս հրոսակների արշաւանքը դիպ ի Հայաստան և ուղղուեց. Հայոց զօրավար Թէոդորոս Ռշտունի շտապեց այս արշաւանքի առաջքը առնել Ասորեստանի սահմանի մօտ. բայց հայ նախարարներից ոմանք, որ խեթիւ էին նայում Թէոդորոսի իշխանութեան վերայ, վատաբար առաջնորդեցին մահմետական հրոսակ-

(*) Պատմ: Սեբէոսի ի Հերակլ և Ցաւելուածք հրատ. Պ. Քեր. Պատկանեան ի 1879 ամի ի Ս. Պետերբուրգ, յերես 68:

ներին դէպի Հայաստան, և այս արշաւանքի ու գաւաճան նախարարների վատութեան առաջին զոհը Տարօն գաւառը դարձաւ։

Վահան կամսարական երբ տեսաւ թէ միւս նախարարները վատաբար չեն կամենում միաբան դիմադրել ընդհանուր թշնամու դէմ՝ ինքն միայն, ձեռնտուութեամբ մի քանի իշխանների՝ սկսեց գործը. այդ իշխաններից էլ Անձևացեաց Սահուռ իշխանը պատերազմի ժամանակ իւր զօրքով անցաւ հրոսակների կողմը։ Հայք յաղթուեցին և սակաւ ոմանք կարողացան փախստեամբ ազատուել կոտորածից. որովհետև այս պատերազմը ի սէր հաւատոյ էր, վասնորոյ և պատերազմի դաշտը կոչուեց ս ու ր բ բ ա ն ա կ։

Թէոդորոս Ռշտունի թէև աճապարեց դիմագրաւել Արաբացի հրոսակներին, բայց տեսնելով հայ նախարարներին անմիաբան, պառակտեալ և վատաբար մեկուսացած՝ ինքն և ս առանձնացաւ, որով մահմետական հրոսակները անարգել մտան Հայաստանի միջնագաւառները և աւերակ դարձրին երկիրը։

Այս գառն ժամանակին Եզր, որ ըստ ոմանց « Արևագալի » երգերը սահմանեց՝ 10 ամեայ և 8 ամեայ իշխանութիւնից յետոյ մեռաւ և Տայոց Իշխան գիւղացի Ներսէս եպիսկոպոսը, որ ուսեալ անձն էր ու աշխարհական ժամանակ զինուորական պաշտօն վարած՝ հակառակ իւր կամաց՝ ընտրուեց կաթուղիկոս Ներսէս Գ. անուամբ։

Մինչև Ներսէսի ընտրութիւնը, Արաբացի հրոսակները հասան Այրարատ և յարձակմամբ նուաճելով Դուին քաղաքը՝ Յունվարի 6ին Աստուածայայտնութեան օրը 12 հազար մարդ կոտորեցին. այրեցին քաղաքի շինութիւնները և 35 հազար գերիներով վերադարձան Ատրպատական։ Ներսէսի առաջին գործն եղաւ թաղել դիակները, որոնք սկսել էին նեխել, մխիթարել ու սփոփել Հայ ժողովրդին և շինել, վերանորոգել ու կարգաւորել այրուած ու քանդուած եկեղեցիքը։

Դվնայ եկեղեցիքը վերանորոգելուց յետոյ՝ շինեց Խորվիրապի վանքն և իւր բնակութեան համար՝ Վաղարշապատու առապարի, տեսողաց զարմացուցիչ հոյակապ եկեղեցին Ս. Գրիգորի անուամբ, Ս. Գրիգոր Լուսաւորչի մնասունքները՝ սիւների խարխխներում ամփոփելով, իսկ գլուխը՝ գեղեցիկ տապանակի մէջ՝ սեղանում։ Այս եկեղեցին, որի բեկորներն անգամ հիացք են բերում մարդու վերայ՝ գտնվում է Վաղարշապատից $1/2$ ժամ հեռաւորութեան դէպ ի արևելք, ըստ աւանդութեան այն տեղը՝ ուր Տրդատ Ս.

Գրիգորին ընդ առաջ դուրս եկաւ Խորվիրապից վաղարշապատ գալու ժամանակը։

Ներսէս այս եկեղեցին շրջապատեց գեղեցիկ շինութիւններով և կրօնաւորների բնակարաններով. շրջապատը այգիներ ու անդաստաններ պատրաստեց և ջուր բերեց. սակայն այս մեծահռչակ ուխտը երկար գոյութիւն չունեցաւ և քանդուեց տաճիկների ձեռքով*)։

Ներսէս բաց ի շինութիւններից՝ ձեռնարկեց բարեկարգել եկեղեցիքը, մանաւանդ ժամակարգութիւնը, որ շարականների շատութեան և բազմաձեւակութեան պատճառով բաւական շփոթ կերպով էր կատարվում. այնպէս որ, միանգամ վարդավառի տօնին Բագուանում առաւօտեան ժամերգութեան ժամանակ ուխտն զանազան հոլով շարականներ հարկ եղաւ փոփոխել, որ մեծ շփոթութեան և խռովութեան պատճառ դարձաւ։

Ներսէս հարկաւոր բարեկարգութիւնները ի գլուխ հանելու համար իւր հայրապետութեան վեցերորդ տարին 645 թ. Դվինայ ե. ժողովը գումարեց բազմաթիւ եպիսկոպոսների, եկեղեցականների ու իշխանների ներկայութեամբ։

Ժողովը նզովեց բոլոր հերետիկոսներին ու հերձուածողական գրքերը. մերժեց Քաղկեդոնի ժողովը, և եկեղեցականների ու աշխարհականների համար 12 յօդուածով կանոններ հաստատեց։ Ժողովի հաւանութեամբ Ներսէս Շիրակայ Դարեվանքի առաջնորդ Ձեն մականուամբ Բարսեղ վարդապետին յանձնեց շարականների ընտրութիւն, և ընտրուած շարականները ձանձնիկ կոչուեցին ու երգվում են եկեղեցում մինչև ցայսօր անփոփոխ, յաւելմամբ ըստ տօնից նոր գրուած մի քանի շարականների։

Կարճատև անդորրութիւնից յետոյ՝ նորից սրածութեան և հալածանաց ենթարկուեց Հայաստան աշխարհն ու Հայաստանեայց եկեղեցին. վանն Ղր արաբացի հրոսակները նորից անհամար բազմութեամբ արշաւեցին Հայաստան։ Թէոդորոս Ռշտունին, Սմբատ կիւրապաղատը և ուրիշ նախարարներ տեսնելով որ չեն կարող դիմադրել հրոսակների կատաղութեանը՝ ընդառաջ գնաց և հպատակութիւն խոստանալով բազմագանձ ընծաներով յետ դարձ-

(*) Կիրակոս Գանձակեցի, Մոսկուա ի 1858 ամի. երես 34. Սերէոս եպիսկոպոս երես 118։

րին. երբոր լսեց այս ծուռնայ Կոստանդին կայսրը՝ մոռաւ Հայաստան մոքումը դնելով աւերել և կործանել. բայց զիջանելով Ներսէս հայրապետի միջնորդութեանը, երկիրը նորից ի հպատակութիւն նուաճելուց յետոյ՝ եկաւ Դուին և իջևանեց կաթուղիկոսարանում և այս դէպքը յարմար առիթ գտնելով՝ առաջարկեց կաթուղիկոսին ընդունել Քաղկեդոնի ժողովը. Ներսէս և Կաթուղիկոսարանի եպիսկոպոսները առ ահի՝ ընդունել կեղծեցին կայսեր առաջարկութիւնը, և հաղորդուեցին յոյն քահանաների մատուաճ պատարագին, բացի մի եպիսկոպոսից՝ որին երբ կայսրը հարցնում էր չընդունելու պատճառը և ստիպում հետևել իր կաթուղիկոսին, — եպիսկոպոսը պատասխանեց. « Կաթուղիկոսն և ես ակամայ է հաղորդուել, վասն զի նա ինքն եպիսկոպոսների ժողովով մերժել է Քաղկեդոնի ժողովը »:

Կայսրը Հայերին բռնի Քաղկեդոնի ժողովին վարժեցնելու համար բազմաթիւ զօրքեր թողեց Հայաստանում և գնաց Կ. Պօլիս. իսկ զօրականները այնպիսի խժդժութիւններ և յանուն Քաղկեդոնի ժողովի գայթակղական գործեր գործեցին, որ Հայերը զզուած քաղկեդոնականութիւնն ու անհաւատութիւնը մի և նոյն բանն էին համարում: Հայերի այս տրամադրութիւնը յոյն վերակացուները հասցրին ի լուր կայսեր և Կ. Պօլսոյ պատրիարքի. որոնք թղթով պատուիրեցին Ներսէս կաթուղիկոսին, Սմբատ կիւրապաղատին և Թէոդորոս Ռշտունուն տանել յոյն վերակացուների գործերին, հետևել Քաղկեդոնի ժողովին և ի հաւատատութիւն՝ թղթով յայտնել իրանց յանձնառութիւնը: Ներսէս կայսեր պատասխանելու համար Դուինում 648 թ. նորից ժողով կազմեց որի վճիռը եղաւ. « Մենք նոր ուսանդութիւն չենք ընդունում՝ միայն հաստատուն ունինք հաւատոյ այն վարդապետութիւնը, որ ընդունել ենք Ս. Գրիգոր Լուսաւորչից, երեք տիեզերական սուրբ ժողովներից և մեր սուրբ թարգմանիչներից. ուրիշ բան չենք յանձն առնիլ » *): Այս վճռից յետոյ Ներսէս մի ընդարձակ գրութեամբ նիկիոյ ժողովի հանգանակը ուղարկեց կայսեր՝ խնդրելով թոյլ տալ իրանց պաշտել իրանց հաւատը, ինչպէս հեթանոս պարսիկ խոսրով և նաւասարդեան թագաւորները թոյլ են տուել » **):

---

*) Զամչ. հատ. Բ. եր. 350. **) Սեբէոս եր. 119—130.

Ա. յս թվ. ից յետոյ թէև Յունաց կայսրը յայտնի սոսկմունք գործ չը դրեց, բայց յոյն վերակացուները սկսեցին աւելի և աւելի նեղել հայերին և գայթակղական գործերով զզուեցնել։ Ներսէս Գ. տեսնելով թէ Յունաց հետ իւր ունեցած յարաբերութեամբ կասկածելի է դարձել և ենթարկուել է Թէոդորոս Ռշտունու զայրութին՝ թողեց հայրապետական իշխանութիւնը և առանձնացաւ իւր հայրենի Տայոց աշխարհը, ուստի և հայրապետական իշխանութիւնը տեղապահական իրաւունքով յանձնուեց Յովհաննէս Մանազկերտացուն, որ մայրենի եկեղեցու նախանձախնդրութեամբն վառուած՝ Հայաստանեայցս եկեղեցու կարգ ու կանոնները վերահաստատելու համար, առ ահի Յունաց՝ Դուինից հեռի, Մանազկերտում ժողով կազմեց, մերժեց Քաղկեդոնի և Եզրի ժամանակով եղած Կարնոյ ժողովները և յոյներից զատուելու յատկորոշ կանոններ սահմանեց։

Իսկ Ներսէս Գ., երբ Թէոդորոս Ռշտունի վախճանեց՝ նորից վերադարձաւ Դուին և սկսեց վարել իւր հայրապետական իշխանութիւն վեցամեայ տարագրութիւնից յետոյ։ Ներսէս Ս. Հռիփսիմէի Հայաստան բերած ու վարագայ սարում թողած խաչը Թոդիկ ճգնաւորի ձեռքով գտնուելուն համար վարագայ Ս. Խաչի տօնը հաստատեց և Մանկիքեցւոց աղանդով խմորեալ մոլորամիտներին, որոնք մերժումէին եկեղեցւոյ կարգերն ու աւանդութիւնները, հայ իշխանների ձեռքով պատուհասակոծ անելով՝ հալածեց, շատերի ճակատները գրոշմելով որ ճանաչուեն։ Ներսէս քսանամեայ իշխանութիւնից յետոյ 661 թ. վախճանեց, յաջորդ թողնելով իւր սենեկապան Անաստասին՝ որ Ակոռի գլուխն էր։

Ե. ԺՈՂՈՎ ԴՎՆԱՑ

«Եկեղեցականների և աշխարհականների բարեկարգութեան համար։

Ա. Եպիսկոպոսը ուրիշ եպիսկոպոսի վիճակ չը յափշտակէ։

Բ. Եպիսկոպոսը չը համարձակի ուրիշի վիճակում սեղան հաստատել (եկեղեցի օծել) և քահանայ ձեռնադրել։

Գ. Եպիսկոպոսը այցելի իւր վիճակի վանքերին, դպրոցներին և հիւանդանոցներին և չը համարձակի ընդունութեամբ բան ստանալ ոչ ոքից։

Դ. Եկեղեցու ժառանգութիւնը ուրիշին չը վաճառել։

Ե. Քահանաներն ու պաշտօնեաները եթէ ծուլանան եկեղեցու պաշտամունքից՝ պատժուին եպիսկոպոսից։

Զ. Նոքա, որոնք թողնելով քահանայութեան ու սարկաւագութեան գործը, աշխարհային գործերով և որսորդութեամբ կը զբաղուեն՝ զրկուեն եկեղեցու հասոյթից։

Է. Որոնք առանց եօթն տարի սպասելու, և իրանց գերի գնացած (բացակայ) ամուսինների մասին հաստատ լուր առնելու կամուսնանան ուրիշի հետ, նոցա պսակը անվաւեր լինի. Բայց եթէ եօթն տարուց յետոյ անգիտութեամբ ամուսնացած լինին՝ և իրանց առաջին ամուսինը վերադառնայ առաջին ամուսնին կենակցին և ապաշխարեն՝ որքան եպիսկոպոսը կը սահմանի. այսպէս լինի և նոցա համար, որոնք գերութեան (բացակայութեան) մէջ կամուսնանան։

Ը. Եկեղեցու ժառանգաւորները, եթէ անորդի լինին՝ եկեղեցուց սահմանած անշարժ կայքերը չը համարձակին տալ իրանց մերձաւորներին. իսկ եթէ կը կամենան որդեգրել մէկին, իրանց մեռնելուց յետոյ, եթէ քահանայական որդեգրեալը՝ վայելի, իսկ եթէ քահանայութեան անարժան լինի, անշարժ կայքը եկեղեցուն մնայ, իսկ շարժականները տուին նոցա մերձաւորներին։

Թ. Աշխարհականները չը համարձակին մէկին վանահայր կարգել կամ հրաժարեցնել. և ընտանեօք վանքերում չը բնակեն։

ԺԱ. Իշխանները հիւանդանոցում եղող տկարներից հարկ չառնեն։

ԺԲ. Իշխանները և հեծեալները գիւղ հասնելիս վանքում (պատսպարան պանդխտոց) ուտելու և խմելու ագահութիւնը չունենան։

(Կը շարունակուի). Ց. Վ. Մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՍՏԻԱ

I.

Սորանից մի քանի տարի առաջ ես ճանաչում էի մի աղջիկ, որ այժմ բաւականին մեծացած է. բայց ես կամենում եմ պատմել նորա մասին՝ երբ նա դեռ մանուկ էր։

Աղջկայ անունը Նաստիա էր։ Նաստիայի մայրը առաջ միջակ ապրուստ ունէր և ոչ մի բանի համար հոգս չէր անում. բայց Նաստիան այս ժամանակը չէ մտաբերում։ Նորա մանկական յիշողութիւնը երևացել է իւր թանկագին մայրը մի նիհար և տրտում կնի, որ մինչև ուժասպառ լինելը աշխատում էր ձեռք բերելու սակաւ ինչ դրամ տան և ամենօրեայ ուտելիքի վարձը վճարելու համար։ Իսկ բնակարանը ամբողջապէս կազմուած էր մի մեծ և ցածրիկ սենեակից՝ որ գտնվում էր մի բարձր վերնայարկում։

Նաստիան իւր հօրը չէր մտաբերում համարեա. նա ասում էր ինձ թէ հաղիւ հազ, ինչպէս երազում, յիշում է որ միանգամ գիշերը, իւր մայրը լալագին աչքով ընկաւ իւր վերայ, արթնացրեց իրան, վերկացրեց մահճակալից և կուրծքին ամուր սեղմելով տարաւ ուրիշ սենեակ, որ գրեթէ մութն էր, և աղօտ կերպով, կանթեղի լուսով լուսաւորվում էր մահճակալի վերայ պարկած մի մարդու գունատ դէմքը։ Ընդ սմին, Նաստիան աւելացրեց որ այդ իւր հայրն է եղել, բայց նա այնքան նիհար էր որ չէր ճանաչում։

Մայրը դառնագին լալիս էր և Նաստիային անուանում էր. «Նաստիան չէր հասկանում թէ ինչ է նշանակում որբ բառը, բայց շատ ցաւում էր իւր մօր վերայ, որին շատ սիրում էր։

Սորանից յետոյ շուտով նորա մայրը հիւանդացաւ. մի բարի կին գալիս էր նորան տեսնելու և Նաստիան յաճախ լսում էր նորանից թէ, իւր մայրը վշտից է հիւանդացել։

Երկար ժամանակ Նաստիան չէր կարողանում հասկանալ թէ, այդ ի՞նչ տեսակ վիշտ է, որից կարելի է հիւանդանալ։ Նորան ասացին. «Անմիտ, միթէ դու չըգիտե՞ս որ քո հայրը մեռաւ։ — Տրտմելու ի՞նչ կայ այստեղ»։ Հարցրեց Նաստիան և մտածում էր. «Հայրիկը մեռաւ, այս բանը ինչո՞ւ է մայրիկին տրտմեցնում, և ի՞նչ է նշանակում մեռաւ»։

Այս մասին մեկին հարցնել նա չէր կամենում. որովհետև ուրիշներին ընտելացած չէր, և միայն մօր հետ էր սիրում խօսել։ Նորա մօտ էլ, վախենում էր արտասանել հայրիկի անունը, կամ «մեռաւ» խօսքը ասել. նա մտածում էր որ սորանով կարող է մայրիկը նորից հիւանդանալ։

Ցետոյ մտաբերում Նաստիան իրան իբրև վեց տարեկան աղջիկ, որ իւր մօրը արդէն կարող էր մի քանի դէպքում օգնել, որ նիհար, գունաթափ և տրտում՝ ամբողջ օրը կարում էր սպիտակեղէն և երբեմն գիշերն էլ էր կարում՝ ինչ որ չէր կարողանում ցերեկը վերջացնել։

Մտաբերում Նաստիան, որ դիշերը արթնանում էր և նկատում թէ մայրիկը ինչպէս դառն արտասուք էր թափում, հեկեկում էր և նորան ծնկի վերայ մնում էր կարը։ Մոմը վառվում էր. սենեակը ցուրտ էր և խոնաւ . . . Նաստիան գլուխը վերմակի տակից հանում էր, և երկար մտիկ էր անում մայրիկի վերայ. ինքն էլ, գլուխը բարձի վերայ ամիոփելով սկսում էր դառն արտասուել. նորա սիրտը սկսում էր սաստիկ բաբախել, և կուրծքը սկսում էր սեղմուել. նա աշխատում էր զսպել իւր հեկեկանքը, որ մայրիկը չլսի։ Սորանով սկսում էր աւելի սեղմուել կուրծքը. իսկ արտասուքը աւելի և աւելի թափվում էր։

Հետզհետէ աղջիկը դադրած էր թիւնից աննկատելի կերպով խորը քնում էր, բայց քնի մէջ երբեմն հեկեկում էր և վեր էր թռչում. իսկ մայրիկը, նախ քան իւր քնելը, մօտենալով աղջկան խաչակնքելու՝ նշմարում էր որ, նորա բարձը բոլորովին թացացել է լուսլիայն թափած դառն արտասուքից։

Հետևեալ առաւօտը, երբ որ Նաստիան արթնանում էր, յիշում էր որ դիշերը տեսել է մօր արտասուքը. կամաց, չընայելով որ դեռ վաղ է և լոյսը հաղիւ հազ միայն սկսել է խփել իրանց լուսամուտներին, վառում էր հնոցը, որի մէջ մայրիկը իրիկուանից արդէն դասել էր փայտեր. կաթսայի մէջ ջուրն էր լցնում և տաքացնում էր, մաքրում սենեակը և սրբում ամեն տեղի փոշին և գնում խանութ հաց գնելու. իսկ յետոյ, երբ ստուգում որ բոլորը պատրաստ է, զարթեցնում իւր մայրիկին։

Մայրիկը արթնանում, նայում իւր աղջկայ վերայ, և իրան, մինչև անգամ բաղդաւոր էր զգում. և չընայելով բոլոր վշտերին՝ որոնք ծանրացած էին այս խեղճ կնոջ վերայ, նա իրան չէր համարում և չէր էլ կարող համարել անբաղդ այնպիսի աղջկայ հետ՝ որպիսին էր Նաստիան, այն աղջկայ հետ՝ որ այնպիսի զօրեղ սէր ունէր դէպի իւր մայրը։

Երկար այսպէս ապրում էին Նաստիան և մայրիկը. Մայրիկը անդադար աշխատում էր. իսկ Նաստեան որքան մեծանում էր, այնքան աւելի մօրը օգնում էր։

Շատ ժամանակ չանցած Նաստիան ոչ միայն մաքրում էր տունը, այլ և պատրաստում էր ինչ և իցէ կերակուր. լուանում էր մանր սպիտակեղէնները, և երբեմն մայրիկի կարին էլ օգնում էր։

Երբեմն, կիրակի օրերը, երբ որ մայրիկը աւելի ազատ էր լինում, Նաստիային ցոյց էր տալիս տառերը. որոնց Նաստիան շուտով սկսեց ճանաչել. իսկ կարդալ՝ արդէն ինքն իրան սովորեց։ Նորա գիրքը բոլորովին հին և պատռտորած էր, բոլորովին անհաճելի փոքրիկ մանուկներին. չընայելով սորան Նաստիան այնպիսի բաւականութեամբ երեկոյեանները ծալապատիկ նստում էր կարը շարունակող իւր մայրիկի կողքին և ցրտից դողդողալով մինչև մոմի բոլորովին վառուելը, փոքրիկ մատը բառերի վերայ դնելով՝ կիսաձայն և դրնդիչ երգելով բառ առ բառ կարդում էր, և այսպիսով գոհ էր։

Մայրիկը ասումէր՝ «Նաստիա, չէ՞ որ քո քննելու ժամանակն է. գնա քնիր»։ — «Ոչ, սիրելի մայրիկ, թոյլ տուր դեռ նստեմ միայն այս երեսն էլ կարդամ»։

Այսպիսի բաւականութեամբ նա կարդումէր իրան անհասկանալի գիրքը, որովհետև կամենումէր կարդալ սովորել։ Կարող էք երևակայել նորա հիացումն երբ որ մայրիկը միանգամ բերից նորան թէև պատառոտուած, բայց մանկական գիրք՝ որի լուսանդակ թիւնը Նաստիայի համար թէ հասկանալի և թէ դուրեկան էր։

Շատ անգամ Նաստիան այս գիրքը կարդալիս՝ յանկարծ ընդհատելով սկսումէր բացականչել «Ախ մայրիկ, այս գիրքը ինչ լաւ է գրուած, Այս տեղ կայ մի աղջիկ, որը բոլորովին իմ նման մտածում խօսում և զգում է, այլ և մի կողմից էլ կարծես կենդանի աղջիկ լինի։ Եւ ինչ որ կայ գրքի մէջ, ես հասկանումեմ բառ առ բառ, մինչդեռ միւս գիրքը ես չէի հասկանում, բայց չըգիտեմ ինչից է՝ այն գիրքը էլի սիրումեմ»։

Այսպէս էին ապրում և կենցաղավարվում մայրիկը և Նաստիան։ Երկուքն էլ չարչարվումէին, երկուքն էլ աշխատումէին. այսու ամենայնիւ երբեմն նորա ուրախ էին լինում։

Ուրախ էին լինում այն ժամանակ, երբոր գործը վերջացնելով՝ սկսումէին պատրաստուել քնելու, այլ և, երբ որ խօսումէին միևնոյն գործ սկսելը։ Նաստիան սիրումէր խօսակցել իւր մայրիկի հետ. մայրիկը պատմումէր նորան շատ դուրեկան բաներ։ Նա բոլորը հաղորդումէր աւանդումէր իւր աղջկանը, ինչ որ գործ ձարելու համար ուրիշների տուն գնալիս տեսել էր. պատմումէր թէ ինչ տեսակ են ապրում այն մարդիկը, ինչ տեսակ մանուկներ կայրին, թէ ինչի վերայ են նորա խօսում իրար հետ և դեռ շատ բաներ։ Այս ամենը պատմումէր նա տխուր ձայնով, բայց և շատ սրտաշարժ կերպով։ Երևումէր որ, ուր և լինէր և մայրիկը ինչ և տեսնէր նա, միշտ մըտքումն ունէր Նաստիային. միշտ համեմատումէր բոլորին Նաստիայի հետ, Նաստիայի կեանքը ուրիշ մանուկների հետ, — և ուրախալի չէր լինում այս համեմատութիւնը։

Եթէ մայրիկը այնպէս սաստիկ սիրումէր իւր աղջկանը, Նաստիան էլ պակաս տեղ չէր թողնում այս բանում. նորա իրար ջերմ սիրումէին։

Երբ որ իւր մահճակալում պարկում էր Նաստիան՝ մտածում էր. «իմ մայրիկը ո՛րքան բարի և լաւ է, նա ո՛րքան սիրումէ ինձ։ Չէ՞ որ նա իմ համար է այնքան աշխատում, ուժասպառ լինում . . . . Երբ որ մեծանամ, անշուշտ, բոլորովին չեմ թողնիլ նորան աշխատել. թող հանգստանայ, հանգիստ լինի. այնժամանակ ես կաշխատեմ որ շատ փող շահեմ, որ իմ մայրիկը հարուստ լինի։ Չէ՞ որ մայրիկը ասումէ թէ կան մանուկներ, որոնք մայրիկ չունեն, նորա ինչքա՜ն անբաղդ են. իսկ ես. չէ՞ որ բոլոր աշխարհի վերայ ամենից բաղդաւոր եմ, որովհետև ո՞վ ունի այնպիսի մայրիկ ինչպես իմ մայրիկն է»։

Այսպէս էր մտածում Նաստիան և աչքերը լցվումէին արտասուքով։

այսպէս նա նաստիկ զգածվումէր որքան սիրում էր իւր մօրը։ Իսկ մայրիկը ընկողմանումէր մահճակալի վերայ և մտածում էր իւր աղջկայ մասին, շը-նորհակալ էր լինում Աստուծուց որ իւր աղջիկը այնպիսի խելացի բարի, այնպիսի լաւ օգնական է իրան։ Սիրումէր մայրիկը իւր աղջկան. և տխուր մտքեր էին առաջ գալիս նորա գլխի մէջ. մտածումէր այն բանի մասին թէ ինչպէս կը կարողանայ արդեօք ապրել Նաստիան երբ որ չափահաս կը լինի. «մի գուցէ նորա կեանքն էլ այնպէս խեղճութեամբ անցնի՝ ինչպէս իմ և որտեղ կը յաջողի նորան մի կտոր արդար վաստակով հաց գտնել»։ մտածումէր և չէր կարողանում քնել խեղճ մայրիկը։

Լինումէին և այլ կերպ երեկոներ երբեմն մայրիկը պարտաւորվումէր վերջացրած կարը տանել տիրոջը տալ և վախենումէր նա իւր աղջկանը երկար ժամանակ տանը մենակ թողնել հետը տանել էլ անյարմար էր. ցո՛ւրտ էր, Նաստիան հալաւ չուներ. և ահա մայրիկը տանումէր նորան իւր միակ ծանօթ հարևան կնոջ մօտ։ Ա յս ծանօթը էր մի ծեր կին, որ իւր կեանքը անց էր կացրել մի հարուստ ընտանիքում դայեկութեան պաշտօն կատարելով. իսկ այժմ իւր կեանքը անցնումէր հանգստութեամբ շարունակ ստանալով թոշակ, և կարող էր ապրել ո՛ւր և ինչպէս կամենար։

Նաստիայի համար իսկապէս տօն էր լինում երբ որ մայրիկը տանումէր նորան տիկին Ավգօտիա Թէոդոսեանի (այսպէս էին անուանում ծերունի կնոջը) մօտ։ Նա կենումէր մի փոքրիկ և լաւ սենեակի մէջ, որ բաւական գոհացուցիչ էր (գոնէ Նաստիայի համար այսպէս էր երևում)։ Ծերունի կինը շատ բարի էր և շատ սիրումէր իւր փոքրիկ հիւրին. իսկ փոքրիկ հիւրը դռնից ներս էր վազում նորա մօտ, համբուրումէր նորան, և մանուկ ու պառաւ գգուում էին իրար. պատմում էր նորան այն ամենը ինչ որ պատահել էր վերջին տեսակցութիւնից յետոյ և ծերունի կնոջ ոտների մօտ փոքրիկ ամօռի վերայ նստելով սկսումէր ստիպել նորան. «դէ տիկին Ավգօտիա», սիրելիս, այժմ դուք ինձ մի բան պատմեցէք բայց լաւը, դուրեկանը,—շուտ, սիրելիս, մի ետացնէք. մայրիկը հիմա կը վերադառնայ և կը տանի ինձ, կասի որ իմ քնելու ժամանակն է...։ Իսկ ես ձեր մօտ այնքան սակաւ եմ պատահում...» ասումէր նա պաղատելով. թէև երբեմն այնպէս էր պատահում որ մայրիկը շուտով չէր վերադառնում և նորա լաւակա՞ն ղրոյց արած էին լինում։

Իսկ ծերունի կինը ուրախութեամբ մխիթարումէր իւր փոքրիկ սիրելիին. պատմումէր նորան շատ դուրեկան պատմութիւններ իւր այն մանկանց կեանքի մասին, որոնց դայեակ էր եղել. իսկ երբեմն էլ առակներ էր պատմում, բայց մեծ բաւականութեամբ պատմումէր իւր վաղուց արդէն մեռած աղջկայ մասին և իւր սիրելի Թոռի,—Սուրէնի—մասին, որը իւր հօր հետ ուրիշ քաղաքումն էր կենում։

Նաստիան սիրումէր այս տեսակ երեկոները. վառվումէր կանթեղը և խաղաղ լուսաւորումէր բոլոր սենեակն ու բարի դէմքը ծերունի կնոջ։ Սիրումէր Նաստիան մտիկ անել այս բարի խորշումեալ դէմքին. հաճելի էին ծերունի կնոջ սպիտակահատն մազերը, սպիտակ գլխարկը, խորշոմած ճակատ-

ները, քիթը և ձեռքերը՝ որոնք արագ շարժումներին շուղերը որոնցով նա լաւ ջորապ էր հիւսում. Համեղի էին թեթեւ դողդոջուն ձայնը և բերանը՝ որի մէջ շատ քիչ ատամներ կային,— այս բոլորը Նաստիան մտիկ էր արել, և նորան դուր էին եկել։ Երբ վերադառնում էր մայրիկը, երկուքը միմեանց հրաժեշտ էին տալիս եւ ծերունուն եւ մանուկին տխրալի էր լինում միմեանցից հեռանալը, միմեանց թողնելը, և երկուքն էլ ցանկանում էին նոյնպիսի երկարներ մեծ անհամբերութեամբ։

Ահա Նաստիան արդէն 9 տարեկան է։ Նա իսկապէս իւր մօր օգնականն է և գեղեցիկ կարէ անում. մայրիկը աւելի շատ ապսպարուած կարեր է բերում, որովհետև Նաստիան կարող էր այնպէս շուտ և լաւ կարել՝ ինչպէս մայրիկը՝ այս պատճառով էլ մայրիկը աւելի շատ փող էր վաստակում. և բացի սորանից Նա այժմ կարող էր տանից հեռանալ և առանց կասկածի մենակ թողնել Նաստիային, որովհետև նա այնպէս խելացի էր, որ մայրիկը նորա վերայ կարող էր վստահել ինչպէս ինքն իւր վերայ։

Մայրիկը ամբողջ օրով հեռանում էր տանից կար անելու մի որ և է հարուստ մարդու տանը, որ տեղ նորան բաւական լաւ վճարում էին, և բացի սորանից նա այնտեղ ճաշում էլ էր։ Այսպիսով Նաստիան դառնում էր տանտիկին. ինքն գնում էր շուկան խեղճուկ ճաշի համար նիւթեր գնելու. նա ինքն էր պատրաստում կերակուրը, կազմում էր հաշիւը, այսինքն հաշվում էր այն կոպեկները, որոնք յանձնուած էին նորան ծախսելու. մի խօսքով, կատարում էր այն ամենը, ինչ որ պէտք է կատարէր տանտիկինը։ Շուկայում նա իւր համար ճարել էր ծանօթներ և մի քանի տեղերում էլ բարեկամներ. շուկայի բոլորովին ծայրում, մի քանի տարի էր արդէն, որ նպարավաճառի խանութում նստած էր մի խիստ դէմքով և խուպոտ ձայնով պառաւ կին. այս պառաւը բոլորին յայտնի էր իւր կոպտութեամբ. բոլորը ատում և ատվում էին նորանից և նա կոչվում էր ղայրացող Պանկրատիոսեան. այսու հանդերձ, նա բարեկամացաւ Նաստիայի հետ։

Դու մի ասել որ, շատ տարիներ առաջ այս նպարավաճառ կինը ունեցել է մի աղջիկ, միակ արարածը, որ նա սիրել է ամբողջ երկրի վերայ. բայց այս իւր մօր ուրախութիւն աղջիկը երկար չէ ապրել և մեռել է դեռ տղայ հասակում։ Նաստիան յիշեցնում էր տիկին Պանկրատիոսեանին նորա մեռած աղջիկը։ Եւ ահա ինչու այս պառաւի դէմքի միշտ խիստ արտայայտութիւնը ընդունում էր աւելի մեղմ կերպարանք. ահա ինչու նորա խուպոտ ձայնի մէջ լսվում էր մի տեսակ մեղմութիւն և փաղաքշանք՝ երբ որ նորա մօտ էր գնում Նաստիան։ ահա ինչու միայն Նաստիան էր որ նորան բարի էր համարում, իսկ տիկին Պանկրատիոսեանը Նաստիային աւելի դիւրութիւն էր վաճառում իւր ապրանքը քան թէ իրան արժեցել էր, և քան թէ կը վաճառէր ուրիշ գնողներին և երբեմն նորան հիւրասիրում էլ էր, լինում էր և այնպիսի ժամանակ՝ որ Նաստիան բոլորը ինչ որ հարկաւոր էր գնելուց յետոյ, ուղղվում էր դէպի տուն, բայց տիկին Պանկրատիոսեանը ձայն էր տալիս «սպասիր փոքրիկ Նաստիա, քեզ համար բան եմ պահել, իմ զա-

ւակս»։ Եւ այսպէս հաճելի և փաղաքուշ դէմքով հանումէր գրպանից իւր ընծան, որ լինումէր կամ մի թռուցմած խնձոր և կամ մի հանարակ քաղցրաւէնի և աւելցնումէր «կեր, կեր, անուշ լինի»։ Նա երկար մտիկ էր անում հեռացող Նաստիայի ետևից. և համարեա միշտ, աղջիկը չետ դառնալով, տեսնումէր կնոջ տխուր աչքերը իւր վերայ ուղղած ... ու նոցա մէջ կանգնած արտասուքի շիթերը. իսկ տիկին Պանկրատիոսեանը միշտ շշնչումէր. «Ահա, ահա բոլորովին սորա նման էր և իմ աղջիկը»։... Նաստիան շատ վաղ էր գնում շուկայ. մայրիկը չէր թոյլ տալիս նորան ուշանալ, եթէ ոչ Նաստիան շուտով չէր կարող տուն վերադառնալ. ինչ որ նա տեսնումէր շուկայում, նորա համար դիւթիչ և գրաւիչ էին։ Երբեմն էլ շուկայ գնացած ժամանակ ամբոխը այնտեղ շատ լցուած էլ լինում. դէ արի, ու մի նայիլ,— եթէ կամենար էլ մտիկ անել, անհնար էր. մայրիկը տանը սպասումէր,— նա պէտք է բանի գնար. իսկ տունը անկարելի էր առանց մարդու թողնել. մայրիկը սպասումէր Նաստիայի վերադարձին...։

Եւ նա կապոցը ձեռքին՝ կամենումէր շտապել. բայց ահա կրպակը լի շատ դուրեկան իրեղէններով. Նաստիան կամենում էր հայելու պէս փայլող ապակիներից մտիկ անել իւրաքանչիւր իրեղէնին, բայց անկարելի էր։ Ամէնից հետաքրքիրը աղջկանց բազմութիւնն էր, որ ուռնոցով, պայուսակով, պարիով և զամբիւղով գնումէին ի հարիէ սովորելու։ Նաստիան չէր կարողանում դիմանալ, չէր կարողանում չընայել նոցա. նոցա իրար հետ ունեցած խօսակցութիւններին մտիկ էր անում. և այնպէս հետաքրքրվումէր նոցանով, որ շատ անգամ մոռանում էր և նոցա ետևից մի քանի քայլ էլ գնում էր, չընայելով որ իւր գնալու ճանապարհը ուրիշ էր։ Այլ և սակաւ բան կար նորան, որ այնքան վաղ վեր էր կացել, հետաքրքրելու։ Չես կարող հաշուել այն ամենը, որոնք հետաքրքրումէին նորան, որ բացի իրանց ցածլիկ սենեակից, ուրիշ բան չը տեսած աղջկիկ էր. միւս մանուկները չէին էլ նկատում այն, ինչ որ Նաստիայի համար անսովոր և վերին աստիճանի հետաքրքիր էին թվում։

Տուն վերադառնալով, նա սկսումէր զբաղուել տան անտեսութեամբ. նա ամբողջ օրը մէն մենակ էր անցկացնում. միշտ կարումէր, միշտ զբաղուած էր, և այս պատճառով էլ տաղտկութիւն չէր զգում։ Չէր ձանձրանում, որովհետև զգումէր իրան մի հարկաւոր էակ. գիտէր որ իւր մայրիկին շատ պէտքական է, որ առանց իրան մայրիկը շատ դժուարութեամբ կըկարողանար ապրել.—վերջապէս գիտէր որ ինքն արդէն դրամ է վաստկում և օգնումէ իւր մօրը, և այս խորհրդածութիւններով՝ Նաստիան իրան բոլորովին բաղդաւոր էր զգում։

Բայց ահա, մայրիկը սկսումէր դարձեալ տրտմել և հոգս անել և երբեմն ասել իւր աղջկան. «լսիր Նաստիա, դու ասումես որ բոլորովին բաղդաւոր ես և ուրախ՝ ինձ օգնելովդ. բայց դու չըգիտես թէ ես ինչպէս տխուր եմ, որ դու էլ իմ պէս ամբողջ օրը միշտ պէտք է կար անես։ Ասենք իմ համար ոչինչ ես էլ մանուկ չեմ. բայց դու ախր նոր գեռ

պէտք է կեանք վարեմ։ Միթէ դու չես սարսափում մտածելով որ դեռ 20 30 տարի պէտք է այսպէս միշտ նստես, և գլուխդ քաշ արած կարիդ վերայ՝ պէտք է կարես, կարես ու կարես։ Ես սարսափումեմ մտածելով այդ բանի վերայ. միթէ դու քո ամբողջ կեանքում անգրագէտ պէտք է մնաս ինչպէս այժմ։ Այն տներում, ուր ես կար եմ անում, երբ մտիկ եմ անում թէ ինչպէս քեզանից էլ փոքր աղջիկները լաւ կարդում, գրում և շատ բան գիտեն, ես մտածումեմ իմ Թշուառ Նաստիայի վերայ, ու սկսումեմ ցաւել նորա համար։ Ցաւումեմ ես, որ նա միւս խաթունների աւելի անկիրթ չըծնուեց ինձանից, բայց անկիրթ պէտքէ մնայ, որովհետև ոչինչ չըպէտք է կարողանայ սովորել... իսկ այս բոլորը—աղքատութիւնից։ Ախ Նաստիա, ցաւումեմ քո Թշուառութեան վերայ .... Նաստիան լսումէր, և սկսումէր վշտանալ՝ որ ուրիշ աղջիկները սովորումեն, իսկ ինքը ոչ. աչքերը արտասուքով լցվումէին. բայց շուտով աչքերը սրբումէր, որ մայրիկը չը նշմարի և պատասխանումէր. «Ի՞նչ անենք, մայրիկ, թէև այն աղջիկները կարդացող են, բայց իմ նման կարել, հնոցը վառել, և կերակուր եփել չըգիտեն. և, իրանց մայրիկին՝ հաստատ գիտեմ որ իմ նման չեն սիրում»։ Եւ ընկնելով մոր ծոցը ամուր փսթաթվումէր. տանջվումէր Նաստիան որ ուրիշ աղջիկների պէս կարդացող չի լինիլ, չի լինիլ այնպէս, ինչպէս մայրիկի պատմած աղջիկներն են. մտաբերումէր նա աղջիկների խումբը, որոնք կարդալու գնալիս՝ ամեն առաւօտ հանդիպումէին իրան, և աւելի ծանրութիւն, աւելի ցաւ էր զգում իւր սրտի մէջ. .... Նաստիայի համար, մայրիկը, վճռողաբար ասելով, չէր կարող թոշակ վճարել. չընայելով մոր աղաչանքներին ու հոգացողութեան՝ նորան ձրիաբար ոչ մի տեղ չընդունեցին։

Այս տեսակ ժամերը թէ՛ Նաստիայի և թէ մայրիկի համար շատ ցաւալի էին լինում։ Վերջապէս Նաստիան սկսումէր իւր վիշտը թաքցնել մայրիկից. որովհետև տեսնումէր որ առանց այն էլ, շատ դժուար էր խեղճ մայրիկի կեցութիւնը. և սորանից Նաստիան սկսումէր աւելի ճնշուել....

Իւր վշտի և իւր սարսափի համար, որ ամբողջ կեանքում անգրագէտ պէտք է մնար, Նաստիային մնումէր միայն պատմել տիկին Ավդօտիա Թէոդոսեանին, որը իւր մօտ մեծ համարում ունէր։ Բայց Նաստիան այս պատեհութեան շատ հազիւ էր արժանանում, որովհետև նա այնքան զբաղուած էր, որ հազիւ կարող էր հիւր գնալ։ Այն հազուագիւտ երեկոներին, երբ որ Նաստիան տիկին Ավդօտիա Թէոդոսեանի մօտ էր լինում, նորա շատ խորհրդածութիւններ ու շատ դատողութիւններ էին անում, և շատ ցանկութիւններ էին յայտնում։ Ծիրունի կինը իւր Սեփանիկի համար պատմում էր, թէ նա ինչպէս է անցնում իւր ժամանակը, ինչով է զբաղվում, թէ նա գիմնազիայում ինչպէս լաւ է սովորում,— Նաստիան լսումէր և հրճվում, և կարդալ սովորելու փափագը աւելի ու աւելի սաստկանումէր. և երևակայումէր իրան որ, ինքը Ստեփանիկից վատ չէր կարդալ։ Տիկին Ավդօտիա Թէոդոսեանը Նաստիային առաւելներ էր

պատմում.— Նաստիան այնուհետև ամբողջ օրերով կարի նստելով՝ այս առակների վերայ էր մտածում և այնքան էր մտածում որ սկսումէր հաւատալ էլ։ Ըստ անգամ նա տանը մենակ նստելով կարդումէր և մտածում. «Մայրիկս ինչի՛ է ասում որ, ինձ ոչ մի տեղ կարդալու չընդունեցին. միթէ խեղճ աղջիկները անգրագէտ պէտքէ մնան միշտ նորա համար, որ նոցա համար Թուշակ վճարող չըկայ. միթէ միայն հարուստ աղջիկները պէտքէ կարդալ սովորեն. ա՜խ, ինչպէս լաւ կը սովորէի ես, ինչպէս կաշխատէի ես....

(Կըշարունակուի). (Թարգմ.) * * *

ԱԶԳԱՅԻՆ

ՓՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱ՛Ւ Ի ՄԵՌԵԼՈՑ

Ընտրատի խմբագրութիւնը այս աւետաւոր ողջոյնը հնչեցնելով ի լուր ընթերցողաց՝ աղօթումէ առ յարուցեալն Յիսուս—որ նա յարուցանէ մեզ ի լոյս ճըշմարիտ աստուածգիտութեան՝ յորդելով մեր մէջ զգացումն՝ սիրել բարին ու արժանաւորը և մարդկային կոչման արժանի կատարելութեամբ՝ որդիք կոչուել մեր երկնաւոր Հօրը՝ առհաւատչեայ ունենալով մեր Փրկիչ Յիսուսի Քրիստոսի փառաւոր Յարութիւնը։

ՊԱՏԱՍԽԱՆ ԿՈՎԿԱՍ ԼՐԱԳՐԻ ԾՈԴՈՒԱԾԻՆ

ՀԱՑՈՑ ՀՈԳ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ

Էջմիածնի Լուսաւորչական Հայոց Սինոդի անդամները կարդալով Կովկաս լրագրի 56 և 60 համարները ցաւօք սրտի տեսան առաջին յօդուածի մէջ, բացի ինքեանց և՝ համայն Հայոց հոգևորականութիւնը մեղադրուած՝ ինչպէս չկատարողներ մեր ամենասիրելի Թագաւոր Կայսեր Բարձրագոյն կամաց և հրամանաց, որոնք բացատրուած են Հայոց ուսումնարանաց համար ի լոյս ընծայուած Կանոնագրութեանց մէջ, և մանաւանդ ի 16 Փետրվարի անցեալ 1881 թուականում: Այդպիսի մեղադրանքից ազատ համարելու համար իւրեանց անձը, Սինոդի անդամները պարտքեն համարում ինքեանց յայտարարել, թէ Նորանք միշտ ի նկատի ունենալով ամենայն Հայոց Կաթուղիկոսի բազմազարեան արտօնութիւնները Հայոց եկեղեցական ծխական և հոգևոր ուսումնարանաց վրայ, որոնք պարզապէս բացատրուած են նոյն իսկ Կովկաս Լրագրի յառաջ բերած Ներքին Նախարարութեան 29 Սեպտեմբերի 1876 ամի № 1481 հաղորդագրութեան մէջ, որ պարունակված է Կառավարչի Գլխաւոր Կառավարութեան Փոխարքային Կովկասու, ի 19 Նոյեմբերի նոյն ամի ընդ № 4423, գրութեան մէջ, որ յանուն ամենայն Հայոց Գէորգ Դ. Կաթուղիկոսի ի տեղեկութիւն և ի հրահանգութիւն: Իբրև հոգևորական անձինք Սինոդի Անդամները չեն վստահացել այդ Հայրապետական իրաւունքները՝ որ է Նուիրական՝ որ և իցէ կերպով խախտել:

Մենք վերոգրեալ գրութիւնը յառաջ ենք բերում բառ առ բառ հանդերձ Հայերէն Թարգմանութեամբ, որպէս զի՝ պարզաբանուի մեր վիճելի այն խնդիրը, թէ ումն է պատկանում Հայոց ուսումնարանների բացման և կառավարութեան գլխաւոր իրաւունքը, Կաթուղիկոսին թէ Սինոդին էջմիածնի: Ահա գլխաւոր Կառավարութեան հաղորդագրութեան բուն օրինակը 19 Նոյեմբերի 1876 ամի ընդ № 4423.

« Ваше Святѣйшество	« Ձերդ Վեհափառութիւն,
« Милостивый Архипастырь.	Ողորմած Հովուապետ.
« Въ 19 й день Іюля 1874 года послѣдовало ВЫСОЧАЙШЕЕ ГОСУДАРЯ	Ի տան և ինքներդում ասեր Յուլիսի 1874 ամի հետևեցաւ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հրա-

ИМПЕРАТОРА повелѣніе относительно подчиненія церковно-приходскихъ Армянскихъ школъ на Кавказѣ и за Кавказомъ наблюденію инспекторовъ, нынѣ директоровъ народныхъ училищъ.

Въ виду встрѣченныхъ, при приведеніи сего *ВЫСОЧАЙШАГО* повелѣнія въ исполненіе, недоразумѣній, Статсъ — Секретарь Князь Багратіонъ — Мухранскій, по порученію *ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЫСОЧЕСТВА ГОСУДАРЯ* Великаго Князя Намѣстника Кавказскаго, 16 Декабря 1875 г., отнесся къ МиниструВнутреннихъДѣлъ о разъясненіи слѣдующихъ вопросовъ:

1, Имѣетъ ли Армянское духовное вѣдомство право открывать только приходскія школы съ Элементарными курсами, или же общеобразовательныя учебныя заведенія съ курсомъ болѣе обширнымъ, въ который могло бы входить преподаваніе и другихъ общеобразовательныхъ наукъ.

2, Обязано ли духовное вѣдомство извѣщать мѣстныхъ инспекторовъ о вновь открываемыхъ школахъ и назначаемыхъ въ нихъ наставникахъ.

3, Въ виду уклоненія нѣкоторыхъ армянскихъ школъ отъ наблюденія инспекторовъ народныхъ училищъ разъяснить - имѣютъ ли директоры и инспекторы народныхъ училищъ право и

ման ԹԱԴԱՒՈՐ ԿԱՑՍԵՐ ի մասին ենթարկելու եկեղեցական ծխական Հայոց դպրոցները Կովկասում և Անդրկովկասում Հոկտոմբերեան տեսչաց, այժմ վերատեսչաց ազգային ուսումնարանաց,

Ի նկատի ունենալով տարաձայնութիւնները, որոնք ծագել են այս Բարձրագոյն հրամանի կատարման մէջտեղ, Ստատս — Սեկրետար իշխան Բագրատիոնեան Մուխրանսկին ըստ յանձնարարութեան ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ Թագաւոր Մեծ Իշխան Փոխարքային Կովկասու, ի 16 Դեկտեմբերի 1875 ամի, դիմեց նախարարին Ներքին գործոց բացատրելու համար հետևեալ հարցմունքները.

1, Թէ Հայոց Հոգևոր տեսչութիւնը ունի՞ արդեօք իրաւունք բանալու միայն ծխական դպրոցներ սկզբնական (ընթաց.քով) գիտութեանց, կամ թէ հանրակրթական ուսումնարաններ աւելի ընդարձակ ընթաց.քով, որի մէջ կարողանայ մտնել դասատուութիւն ուրիշ հանրակրթական գիտութեանց:

2, Թէ պարտաւո՞ր է արդեօք Հոգևոր տեսչութիւնը ծանօթացնել տալ տեղական տեսուչներին նոր բացուելու դպրոցների և նրանց վրէ նշանակուած ուսուցչաց մասին:

3, Ունենալով ի նկատի ունենց Հայոց դպրոցների խուսափելը հոկտոմբերեանից տեսուչների Ազգային ուսումնարանաց՝ բացատրել, ունի՞ն արդեօք վերատեսուչները և տեսուչները Ազգային ուսումնարանաց

необязаны ли даже, время отъ времени, посѣщать эти училища.

Вопросы эти, какъ видно изъ отзыва ко мнѣ Товарища Министра Внутреннихъ дѣлъ отъ 29 Апрѣля сего года за № 1481, разрѣшены такъ:

1. *Ваше Святѣйшество имѣете право, не испрашивая разрѣшенія Попечителя Кавказскаго Учебнаго Округа, открывать учебныя заведенія съ курсомъ болѣе обширнымъ и полнымъ*, сравнительно съ приходскими училищами, съ тѣмъ чтобы преподаваніе въ сихъ училищахъ Русскаго языка, Исторіи и Географіи Россіи подлежало наблюденію инспекторовъ народныхъ училищъ.

2, Армянское духовное вѣдомство обязано сообщить учебному вѣдомству свѣдѣнія, какъ о вновь открытыхъ школахъ, такъ о назначаемыхъ въ оныя преподавателяхъ.

3, Права и обязанности директоровъ и инспекторовъ народныхъ училищъ посѣщать церковныя школы и имѣть наблюденіе за преподаваніемъ въ нихъ обязательныхъ предметовъ, какъ въ силу *ВЫСОЧАЙШЕ* утвержденнаго 22 Ноября 1873 г. мнѣнія Государственнаго Совѣта, такъ и *ВЫСОЧАЙШАГО* повелѣнія 19 Іюля 1874 г., не можетъ подлежать сомнѣнію.

իրաւունք և պարտաւոր չՀՆ նաև ժամանակ առ ժամանակ այցելել այդ դպրոցներին։

Այդ հարցմունքները, ինչպէս երևումէ առիս Հայոց-դպրութիւնից ընկերի Նախարարի Ներքին Գործոց ի 29 Ապրիլի տարւոյս ընդ № 1481 այսպէս են լուծուած.

1, Ձեզ վՀԵՀափառՈՒԻՆ իշխանութիւն տալ, ՀՀինդրելով Կայսերական ՀափառՈՒԻՆ Հպատիւ Կովկասեան առաջնակարգ ընդհանուր կառավարչի՝ բանալ և կառավարել ընդարձակ և կատարեալ գիտութեան ընթացքով, համեմատարար ծխական դպրոցների հետ, այն պայմանաւ որպէս զի՝ միայն դասատուութիւնը Ռուսաց լեզուի պատմութեան և աշխարհագրութիւն Ռուսաստանի՝ այս ուսումնարաններում՝ ենթարկուի հսկողութեան տեսչաց Ազգային ուսումնարանաց։

2, Հայոց Հոգևոր տեսչութիւնը պարտաւորէ հաղորդել ուսումնական տեսչութեան տեղեկութիւններ, ինչպէս նոր բացուած դպրոցների, նոյնպէս և նորանց մէջ նշանակուելու ուսուցիչների մասին։

3, Իրաւունքները և պարտաւորութիւնները վերատեսուչների և տեսուչների ազգային ուսումնարանաց այցելելու եկեղեցական դպրոցներին և ունել հսկողութիւն նորանց մէջ պարտաւորական առարկաների դասատուութեանց վրայ, ինչպէս ըստ զօրութեան Բարձրագոյն Հաստատեալ ի 22 Նոյեմբերի 1873 ամի դատողութեան ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ խորհրդարանի, նոյնպէս և ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ Հրամանի 19

По докладу нынѣ ГОСУДАРЮ Великому Князю Намѣстнику о такомъ разъясненіи Товарищемъ Министра Внутреннихъ Дѣлъ, объясненныхъ, выше вопросовъ *ЕГО ИМПЕРАТОРСКОЕ ВЫСОЧЕСТВО*, повелѣвъ принять разъясненія эти къ руководству по вѣдомству Кавказскаго Учебнаго Округа, изволилъ поручить мнѣ увѣдомить объ этомъ Ваше Святѣйшество· и т· д·

Исполняя симъ волю ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЫСОЧЕСТВА съ отличнымъ почтеніемъ и преданностью имѣю честь быть

ВАШЕГО СВЯТѢЙШЕСТВА!
Милостивый Архипастырь.
Покорный слуга
П. КЛУШИНЪ

Յուլիսի 1874 ամի, յի կարագ ենթարկուիլ երկայուրեան։

Ըստ վեկուցման Յայժմ ԹԱԳԱՒՈՐ Մեծ Իշխան Փոխարքային այսպիսի բացատրութեան մասին Ընկերի Նախարարի Նէրքին Գործոց վերեւում պարզաբանած հարցմունքների, ՆՈՐԻՆ ԿԱՑՍԱՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆՆ, հրամայելով ընդունել այդ բացատրութիւնները ի հրահանգուրթիւն ըստ տեսչութեան Կովկասեան ուսումնական շրջանի, հաճեցաւ յանձնել ինձ այս մասին ծանուցանել Ձերդ Վեհափառութեան։ և այլն։

Կատարելով սրանով **ՆՈՐԻՆ ԿԱՑՍԱՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆՆ** *կամքը՝ զերազանց յարգանօք և մտերմութեամբ ունիմ պատիւ մնալ Ձերդ Վեհափառութեան ողորմած Հովուապետ՝ խոնարհ ծառայ Պ. Կլուշին։*

Համեմատելով վերոյգրեալ հաղորդագրութիւնը նախարարի, որը ինչպէս տեսանք, հաստատուած է և ի նորին ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆՆ Թագաւոր փոխարքայէն Կովկասու, և իրրև օրէնք առաջադրուած է ի հրահանգուրթիւն և ի կատարումն Կովկասեան Ուսումնական տեսչութեան, նոր կանոնադրութիւնների հետ ի 16 Փետրվարի 1884 ամի, Սինօդի անդամները գտնումեն, թէ բացի կրօնագիտութեան դասատուութեան վրայ հսկելուց, Հայոց հոգևորականութիւնը չունի ամենևին ուրիշ իրաւունք, այլ միայն պարտական է իւր եկեղեցական ամենայն գումարները ծախսել ծխական անունով դպրոցներ բանալու և փակելու վրայ, և միշտ փակուելու և բացուելու դպրոցների մասին հաշիւ տալ վերատեսչայ և տեսչայ Աղգային ուսումնարանաց։ Հապա որոնք են այն

Ղեռահեռ լրատուները որ Կովկասի յօդուածագիրը ասումէ, տալիս են այդ կանոնադրութիւնները Հայոց հոգևորականութեան։

Բայց պէտք է ասել, որ վերոյգրեալ № 1481 Նախարարի հաղորդագրութեամբ և Մեծ իշխան Փոխարքայի բարձրագոյն հրամանի վրայ հիմնելով, Հանգուցեալ Կաթուղիկոսի հրամանով քացուել են զանազան քաղաքներում եկեղեցական ծախսերով շատ ուսումնարաններ և հաստատուել են հոգաբարձուներ, աւելի ընդարձակ և կատարեալ ուսման ընթացքով, համեմատաբար ծրխական դպրոցների հետ, որոնք այժմ փակուել են Կովկասեան Կառավարութեան ձեռքով ի շատ սրտի ամեն ժողովրդեան։ Միթէ յիշեալ հաղորդագրութիւնը Նախարարի օրէնսդրական կարգով փոխուած է. մեզ դեռ յայտնի չէ ոչ մի տեղից։

Յանկալի է իմանալ, թէ յօդուածագիր պարոնը ինչ մեկնութիւն կը տայ գլխաւոր Կառավարութեան Փոխարքային Կովկասու հետևեալ գրութեանը ըստ ուսումնական մասին յ 31 Յունվարի 1875 ամի ընդ № 387 առ Վեհափառ Կաթուղիկոսն ամենայն Հայոց Գէորգ Դ.

«Въ письмѣ къ *ЕГО ИМПЕРАТОРСКОМУ ВЫСОЧЕСТВУ* Великому Князю Намѣстнику Кавказскому, отъ 28 минувшаго Декабря за № 477, Ваше Святѣйшество доводите до свѣдения *ЕГО ВЫСОЧЕСТВА* о мѣрахъ, принятыхъ Начальникомъ Эриванской Губерніи въ отношеніи къ учителямъ, *находящимся въ вѣдѣніи Вашемъ армянскихъ приходскихъ и общеобразовательныхъ школъ*, состоящихъ въ томъ, во

1, Тѣ изъ учителей этихъ школъ, которые, будучи иностранцами, не имѣютъ даже узаконенныхъ видовъ на жительство въ Имперіи, будутъ немедленно высланы заграницу и проч.

ЕГО ИМПЕРАТОРСКОЕ ВЫСОЧЕСТВО изволилъ поручить

«Ձերդ Վեհափառութիւնը՝

«Նամակի մէջ առ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ իշխան Փոխարքային Կովկասու, ի 28 անցեալ Դեկտեմբերի ընդ № 477, հաղորդումէք ի տեղեկութիւն Նորին Բարձրութեան այն միջոցների մասին, որոնք ձեռք են առնուած Երևանայ Նահանգապետից ուսուցիչների վերաբերութեամբ, որոնք ըստ պետութեան ներքին գործոց նախարարի հրամանի՝

1, *Այդ վարժապետներից նորանք՝ որոնք լինելով օտար սահմանից, չունին անգամ օրինաւոր վկայագիր Կայսերութեան մէջ բնակելու համար, կ՚ուղարկուին փութանակի արտասահման և այլն։*

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆՆ հաճեցաւ յանձ-

мнѣ увѣдомить Ваше Святѣйшество, что вторая мѣра, т. е. обязательство подписками учителей изъ русскихъ подданныхъ въ Армянскихъ школахъ, въ томъ, что они въ теченіе двухъ мѣсяцевъ должны получить отъ Попечителя Кавказскаго учебнаго округа свидѣтельства на право преподаванія, то эту мѣру ЕГО *ВЫСОЧЕСТВО* изволилъ найти несоотвѣтствующею ВЫСОЧАЙШЕ утвержденнымъ 19 Іюля минувшаго года дополнительнымъ правиламъ объ отношеніяхъ инспекторовъ и директоровъ народныхъ училищъ къ *находящимся въ завѣдываніи вашемъ школамъ;* вслѣдствіе чего мною предложено Начальнику Губерніи сдѣлать зависящее распоряженіе о возвращеніи таковымъ учителямъ отобранныхъ отъ нихъ подписокъ.

Въ предупрежденіе же подобныхъ недоразумѣній со стороны другихъ Губернскихъ Начальствъ, будетъ сдѣлано надлежащее предвареніе. ит. д.

Поручая себя молитвамъ Вашего святѣйшества, имѣючестьбыть, Милостивый Архипастырь, всепокорнѣйшимъ и преданнымъ слугою

Князь Багратіонъ—Мухранскій

Նել ինձ ծանուցանել Ձեր Վեհափառութեանը, թէ երկրորդ միջոցը, այն է պարտաւորել ստորագրութեամբ ուսուցիչներին Ռուսաց հպատակութեան Հայոց ուսումնարաններում այն բանում, որ նորանք երկու ամսուայ միջոցում պարտ են ստանալ Հոգաբարձուից Կովկասեան ուսումնական շրջանի վկայագիր դասատուութեան իրաւունքի համար, այդ միջոցը ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆԸ համեցաւ անհամապատասխան գտնել ԲԱՐՁ ԲԱԳՈՑՆ հաստատած 19 Յուլիսի անցեալ ամի լրացուցիչ կանոնների հետ տեսչաց և վերատեսչաց աղգային ուսումնարանաց վերաբերութեանց մասին պէտք այն ա-ա-ա-ճապարանքը, որով Ձեր Կաթողիկոսութիւնն նէյտր են գտնում, որի համար ես առաջադրել եմ երևանայ Նահանգապետին առնել նորանից կախուած արնօրէնութիւն վերադարձնելու այնպիսի ուսուցիչներին նորանցից վեր առած ստորագրութիւնները:

Այսպիսի տարակուսութիւնները չկրկնուելու համար՝ միւս Նահանգապետների կողմից պարտադրուած նախազգուշութիւն կանուխ: և այլն:

Յանձնելով դիս աղօթից Ձերոյին Վեհափառութեան, ունիմ պատիւ լինել Ձեզ, Ողորմած Տէրս, ամենախոնարհ և անձնուէր ծառայ Կնեազ Նազրատիոն Մուխրանսկի:

Գալով այն հարցին, թէ «Հայոց Հոգևորականութիւնը յամառեալ է պահել 10 տարուայ ընթացքում կատարելուց Բարձրագոյն հաստատուած կանոնները 19 Յուլիսի 1874 ամի», մենք վստահանում ենք յայտարարել, թէ Սինոդի անդամները և թէ ընդհանրապէս Հայոց հոգևորականութիւնը վաթսուն տարուայ Ռուսաց պետութեան ընթացքում, վայելելով միշտ Ռուսաց կայսերների առատ խնամքը և շնորհած մեծամեծ արտօնութիւնները, երբէք մտքից անգամ չեն անցրել յամառութեամբ խոյս տալ կատարելուց Բարձրագոյն հաստատուած կանոնները 19 ից Յուլիսի 1874 ամի, այլ ընդհակառակը Գերագոյն Պատրիարք Կաթուղիկոսից ստացած կոնդակների համեմատ, ոչնչով պատուիրած էր հաղորդել իւրաքանչիւր ամի Պ. Հոգաբարձուի Կովկասեան ուսումնական շրջանի ըստ ձևոյն և ըստ սահմանեալն կարգի տարեկան ցուցակները բոլոր Հայոց դպրոցների մասին և թոյլատրել վերատեսչաց և տեսչաց ազգային ուսումնարանաց կատարել իւրեանց պարտաւորութիւնը համաձայն վերջին կարգադրութեան, որ բացատրուած էր Կառավարչի Գլխաւոր Կառավարութեան Փոխարքային Կովկասու հաղորդագրութեան մէջ 21 ից Մարտի 1880 ամի № 1515, և յատկապէս ի 27 Մայիսի 1880 ամի № 252, Կոնդակի Նորին Վեհափառութեան, Սինոդի անդամները կատարել են ամենայն ճշտութեամբ առանց երբէք վրիպելու, հրամանագրելով վիճակաւոր Առաջնորդաց և Կոնսիստորիայից Հայոց ի 31 ից Յուլիսի 1880 ամի ընդ № № 3771 — 3777, և ստանալով թէ յառաջ և թէ յետոյ յիշեալ վիճակաւոր Առաջնորդներից և թեմական տեսուչներից լիակատար ցուցակներ երկու սեռի եկեղեցական ծխական ուսումնարանաց, ի շարս որոց՝ նոր բացուած և փակուած դպրոցների, ուղարկել են միշտ և անխափան ամենայն տարի՝ Նորին Գերազանցութեան Հոգաբարձուի Կովկասեան ուսումնական շրջանի, զօ.

Վ.ան 1872 ամի ի 12 Յունվ. 1873 ամի ընդ № 47.
— 1873 ի 30 Յունվ. 1874 ամի № 185.

Եւ յաւելուած ցուցակաց ի 31 Յուլիսի 1875 ամի № 1987.

Նոյնպիսի ցուցակներից, ըստ կնդակի Վեհ. Կաթուղիկոսի ի 23 Օգոստ. 1375 ամի № 258 ուղարկել են գրութեամբ Կառավարչին Գլխ. Կառավ. Փոխարքային Կովկասու ի 13 Սեպտ. նոյն ամի № 2301.

Վ.ան 1874 ամի (
— 1875 — (ի 16 Յունվ. 1876 ամի № 32.

— 1876 — ի 16 Մարտի 1877 ամի № 668·
— 1877 — ի 20 Փետրվ· 1878 ամի № 498·
Ցուցակների յաւելուած ի 24 Մարտի № 712·
— 1878 ամի ի 15 Փետրվ· 1879 ամի № 311·
Եւ ցուցակների յաւելուած ի 18 Մայիսի № 1440·
— 1879 — ի 10 Մարտի 1880 ամի № 632·
— 1880 — ի 20 Մարտի 1881 — № 577·
— 1881 — ի 22 Փետրվ· 1882 — № 424·
Եւ ցուցակների յաւելուած յ8 Մայիսի № 1019·
— 1882 — ի 17 Փետրվ· 1883 — № 660
Եւ յաւելուած ցուցակաց ի 1 Ապրիլի № 1314·
— 1883 — ի 27 Փետրվ· 1884 — № 440·

Իսկ ինչ որ վերաբերում է Կովկաս լրագրի № 60 ի խմբագրի այն խօսքերին թէ, «Ցանկարծական փակումը Հայոց դպրոցների էր ոչ յանկարծական, այլ պատրաստուելումէր Հայոց Հոգևորականութիւնից 1874 Թուականից, և վերաբար արտայայտուեցաւ կատակերգական «non possimus» — «ոչ կարեմք» խօսքով· արդէն այդ խօսքերը վերևումը մեր յառաջ բերած գրաւոր վաստերով ինքն ըստ ինքեան հերքւումեն· թէ երբէք 1874 Թուից Հայոց Հոգևորականութիւնը չէր պատրաստում՝ ուսումնարանների փակումը, և չէր էլ անգամ՝ մտածիլ։

Այլ ընդ հակառակն Սինոդի Անդամները իրաւաբանական տեսակէտից նայելով գործին, և ղգուշանալով Հայոց եկեղեցւոյ Հայրապետի իրաւանց ձեռներիցութիւնից՝ իւրեանց իրաւանց չափն ու սահմանը պահպանելու և ճանաչելու աշխատել են յամենայն դէպս, ինչպէս և հետևեալ գրութեան մէջ և ևս ցոյց են տուել, որ ի 15 Սեպտեմբերի 1884 № 2451· որ է երկրորդ պատասխանն Հաղորդագրութեան Տ· Կառավարչապետին Կովկասու յ31 Յուլիսի նոյն ամի, № 1062·

Его Сіятельству

Господину Главноначальсвующему Гражданскою частію на Кавказѣ.

Сообщеніе Вашего Сіятельства отъ 31 Іюля за № 1062, относительно приведенія въ исполненіе непосредственною властію Эчміадзинскаго Армяно—Григоріанскаго Синода новыхъ правилъ объ Армянскихъ церковныхъ училищахъ, согласно требованія объ этомъ Министерства Внутреннихъ Дѣлъ, поставило Синодъ въ безвыходное положеніе.

Синодъ имѣлъ честь довести досвѣденія Вашего Сіятельства, отзывомъ отъ 24 Мая № 1243, что дѣлами нашихъ церковноприходскихъ школъ непосредственно завѣдывалъ въ Бозѣ почившій Верховный Патріархъ и Католикосъ всѣхъ Армянъ. Въ этомъ случаѣ ЕгоСвятѣйшествослѣдовалъ примѣру своихъ предшественниковъ. Армянскіе Верховные Патріархи, стоя во главѣ св. Армянской церкви, по правиламъ и вѣковымъ преданіямъ ея, освященымъ также Россійскимъ законодательствомъ, несутъ главную заботу о религіоно

Վորին պայծառափայլութեան Տեառն Կառավարչապետին քաղաքական մասին Կովկասու.

Հաղորդագրութիւն Ձերդ պայծառափայլութեան որ յ31 յուլիսի տարւոյն ընդ համարաւ 1062. յաղագս ի կատար ածելոյ անմիջական իշխանութեամբ Սինոդիս Էջմիածնի զկանոնս վասն եկեղեցական Հայ դպրոցաց, համաձայն պահանջման առ այս նախարարութեան ներքին գործոց՝ յանելանելի վճռակ կացոյց զՍինոդս:

Սինոդս ծանուցմամբ ի 24 Մայիսի տարւոյս համարաւ 1243, պատիւ կալաւ ի գիտութիւն հասուցանել Ձերդ Պայծառափայլութեան՝ թէ զգործս եկեղեցական ծխական դպրոցաց մերոց անմիջապէս վարէր ի Տէր հանգուցեալ Ծայրագոյն Պատրիարքն եւ Կաթուղիկոսն ամենայն Հայոց, հետեւելով օրինակի նախորդաց իւրոց:

Ծայրագոյն Պատրիարքութիւնք զուխ կացեալ սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայց՝ ըստ կանոնաց և դարաւոր աւանդութեանց նոյն եկեղեցւոյ, նպաստական եղելոց նաև օրինադրութեամբ Թուրքիոյ, յանձինս բառնան զգլխաւոր հոգատարութիւն կրօնական —բարոյա-

нравственномъ образованіи Армянскаго народа и его юношества, указывая пути для мирной и добродѣтельной жизни и повиновенію властямъ законнымъ, согласно съ ученіемъ св. Евангелія.

У армянъ, начиная съ первыхъ временъ христіанства, школа считалась преддверіемъ церкви и Армянскіе Патріархи, стоя во главѣ церкви, руководили и школой. На этомъ основаніи во всѣ времена Армянскія церковно—приходскія школы учреждались и открывались по кондакомъ (грамота) верховныхъ патріарховъ, и верховные патріархи снабжали эти школы правилами и инструкціями безъ всякаго вмѣшательства и участія Эчміадзинскаго Синода.

*В*ъ 1874 году по вопросу объисполненіи ВЫСОЧАЙШЕ утвержденнаго 12 Ноября 1873 года мнѣнія Государственнаго Совѣта относительно распространенія надзора Директоровъ народныхъ училищъ на Армянскія церковно-приходскія училища, главное Кавказское начальство отнеслось сначала къ Эчміадзинскому Синоду, но, по заявленіи симъ послѣднимъ о своей не компетентности по дѣламъ сего рода, дальнѣйшая переписка велась съ блаженнымъ памяти Католикосомъ Кеворкомъ *IV*.

*В*веденіе въ дѣйствіе новыхъ

կան կրթութեան Հայ ազգի եւ մանկանց նորին՝ ցուցանելով զճանապարհ խաղաղ եւ առաքինի կենաց եւ հնազանդութեան օրինական իշխանութեանց՝ համաձայն վարդապետութեան սուրբ Աւետարանին։

Առ Հայս ի սկզբնաւորութենէ անտի քրիստոնէութեան պարտք համարեալ է նախաթոռն Եկեղեցւոյ, և Կաթուղիկոսունք ի գլուխ կացեալ Եկեղեցւոյ կառավարեալ են և զպարոցն, ուստի և յամենայն ժամանակս Հայ եկեղեցական Դպրոցք բացեալ և հաստատեալք են կոնդակօք կաթուղիկոսաց, և ինքեանք Կաթուղիկոսունք տուեալ են զհրահանգս և զկանոնս վասն այդոցիկ Դպրոցաց, առանց որ և է միջամտութեան և մասնակցութեան Սինոդի Էջմիածնի։

Յորժամ յամին 1874 իսկզբ եղև կատարման Բարձրագոյն ի 23 Նոյեմբերի 1873 ամի հաստատեալ կարծեաց Պետական խորհրդոյն վասն ենթարկելոյ զՀայ եկեղեցական — ծխական Դպրոցս Հսկողութեան վերատեսչաց ժողովրդական Դպրոցաց, Կովկասեան գլխաւոր կառավարութիւնն ի սկզբան ընդ Սինոդիս եմուտ ի գրագրութիւն, և ի ծանուցանել վերջնոյս զոչ ունելի իր իրաւունս միջամտութեան ի սոյն օրինակ գործս, զպարտնակութիւն թղթակցութեանն ուղղեաց առ երջանկայիշատակ Կէորգ Դ. Կաթուղիկոս։

Դարձագրութիւն նորոց կա-

правилъ неминуемо должно повесть за собою измѣненіе существующаго строя въ Армянскихъ, церковно-приходскихъ школахъ, установленнаго властію верховныхъ Патріарховъ-Католикосовъ но на такое вмѣшательство въ прерогативы главы Армянской церкви Синодъ, какъ учрежденіе, состоящее изъ духовныхъ лицъ, подчиненныхъ главѣ церкви, не имѣетъ права и не можетъ принять на себя тяжкой отвѣтственности передъ церковью и своею совѣстію.

А потому, почтительно заявляя о выше изложенномъ Вашему Сіятельству, Эчмiадзинскій Армяно-Григоріанскій Синодъ покорнѣйше проситъ почтить его просьбу и тѣмъ освободить Синодъ отъ настоящаго безвыходнаго положенія.

15 Сентября
1881 г.
№ 2451

Նոնագ ունի փոփոխել զոր այժմըն է կազմակերպութիւն հայ ծխական - Եկեղեցական դարձեալ, ապահմանեալն իշխանութեամբ Մայրագոյն Պատրիարքիս Կաթուղիկոսաց, եւ մինամըն ի գործ իշխանութեան գլխոյ Հայաստանեայց եկեղեցւոյ՝ Սինօդս՝ որոյ անդամք հոգեւորականք աստորագրին Գլխոյ եկեղեցւոյն, չունի իրաւունս և չկարէ ենթարկել զինքըն ծանր պատասխանատուութեան առաջի եկեղեցւոյ և խղճի իւրոյ:

Ուստի յարգոյարար յայտնելով Ձերում Գայծառափայլութեան, Սինօդս խոնարհաբար խնդրէ յարգել զխնդիր Սինօդիս և այնու ազատել զՍինօդս ի ներկայ յանձնանելի վիճակէ:

Տեղ. Առենապետի Սինօդի
Մկրտիչ Արքեպիսկոպոս.

Անդամք Սինօդի
Մեսրոպ Եպիսկոպոս.
Յովակիմ Եպիսկոպոս.
Երեմիա Եպիսկոպոս.
Ներսէս Եպիսկոպոս.
Մամբրէ Վարդապետ.

15 Սեպտեմբերի.
1881 ամի.
№ 2451.

Ինչպէս և վերջին պատասխանում ևս Սինօդի Անդամները հեռագրով յայտնել են Տէր Կառավարչապետին, որ նորա իրաւունք չեն համարում իրանց՝ Կաթուղիկոսի իրաւասութեան ձեռնամուխ լինել, և ահա այն հեռագրի պատճէնը հանդերձ Հայերէն թարգմանութեամբ ի միամտութիւն ընթերցողաց:

ТИФЛИСЪ

Господину Главноначальствующему Гражданскою частію на Кавказѣ.

ՏՓԽԻՍ

Տեառն Գլխաւոր Կառավարչապետի Քաղաքական մասին Կովկասու.

Синодъ имѣетъ честь донести Вашему Сіятельству, что какъ много разъ почтительно заявлялъ, что члены его несчитаютъ себя вправѣ обойти юрисдикцію Верхо́внаго Патріарха, которая священна для Армянской церкви, нынѣ повторяя тоже самое, распоряженіе правилами 16 Февраля оставляетъ на благосклонное усмотрѣніе Правительства.

Սինոդս պատիւ ունի յարգանօք յայտնել Ձերդ Գայծառափայլութեան, զի որպէս բազում անգամ խոնարհաբար յայտարարեալ է, թէ Անգամք Նորին չհամարեն ինքեանց վերաւունս անցանել զվերաստութեամբ Պատրիարքը Կաթուղիկոսի, որ նուիրական է վասն Հայաստանեայց Եկեղեցւոյ, զնոյնն կրկնէ և այժմ, թողլով զանօրէնութիւն կանոնաց Հաստատելոց ի 16 Փետրվարի 1884 ամի, ի բարեհաճ նկատողութիւն բարեբնամ կառավարութեան։

Первоприсутствующій Синода Архіепископъ Мкртичъ.

Տեղ. Առենապետի Սինոդի Մկրտիչ Արքեպիսկոպոս.

Членъ Епископъ Месропъ.

Անդամ Մեսրովբ Եպիսկոպոս.

22 Февраля 1885 г.

22 Փետրվարի 1885 ամի.

Արժանի ենք համարում յաւելացնել Խմբագրի այն խօսքերը թէ՝ երբ «Հայոց հոգևորականութիւնը և նորա ներկայացուցիչները արհամարհել են Հայոց ժողովրդեան շահերը, դիմագրութիւն են թոյլատրել իւրեանց իշխանութեան դէմ և ցանկութիւն յայտնելով ձեռք բերել աշխարհական իշխանութիւն և առաջնորդութիւն քաղաքական վիճակի Հայոց ազգի, ընդ նմին ի չարն գործ գնելով այնպիսի արբատան գործ, որպիսին է մանկանց դաստիարակութիւնը»։ զկիսոյն մուտացածին վերագրութիւններ են, որի դէմ մենք բողոքումենք հրապարակաւ, յայտարարելով, թէ Հայոց հոգևորականութիւնը արժանի է համարուել իւր բարձր կոչմանը թէ իւր և թէ օտար աղբերից, որ ոևիսած հիմներկրդ գործից մինչև

ցայժմ անդադար աշխատել է աւետարանական ճշմարիտ վարդապետութեան հիմանց վրայ առաջնորդել իւր սիրելի հօտը դէպի լոյսը և պատրաստել նորան ընտիր անդամներ հասարակութեան և անձնաղոհ հպատակներ տիրող պետութեանց, որպէս և այժմ մեր ամենասիրելի և առաւտագուրթ կայսեր համար։ Թող այս բաներուն պ. Խմբագիրը չերկբայի, խաբուելով հայատեացներէ թիւր խօսքերից և թող իմանայ հաստատապէս, թէ Հայոց Հոգևորականութիւնը արթուն պահապան լինելով իւր նախնեաց բազմադարեան աւանդութեանց, որոնք սուրբ են Հայոց ազգի եկեղեցւոյ համար, կարողացել է նա ըստ չափու իւր կարողութեան դաստիարակել իւր ժողովուրդը և մեծամեծ ճիգնթափութեամբ ազատել Լանկթամուրներէ, Ցաղկերտներէ, Շահաբբասներէ, Մողոլ Խաներէ և Շահ-Նադիրներէ ճիրաններից իւր եկեղեցին և ազգը, և հասցնել Ռուսաց Կայսերութեան փառաւոր երկգլխեան արծուոյ հովանաւորութեան։ Հայոց ազգը և Հոգևորականութիւնը իւր կարողութեան չափ ամենայն ջանք գործ է դրել իւր ծառայութիւնը ցոյց տալ օրհնաբանեալ Ռուսաց Կառավարութեան ինչպէս ցոյց են տալիս Ռուսաց երջանկայիշատակ Կայսերների բազմաթիւ հրովարտակները, զորս ցանկացողները կարող են գտնել Արքունի Դիւաններում։ Եւ գիտեմք և աներկմիտ եմք, որ մեր օրհնաբանեալ Կառավարութիւնը այսուհետև ևս անպակաս կանէ իւր գութը և խնամքը իւր անձնաղոհ Հայոց ազգից և չի թոյլ տալ ոտնահար լինել։

Կարող ենք նոյնպէս հաւատացնել պ. խմբագրին մեր արդար խղճմտանքով, թէ Հայոց Հոգևորականութիւնը երբէք չի մոռացել և չի մոռանում, որ «արուեստական միջոցներով յարմարացրած լինի այնպիսի դաստիարակութիւն իւր ժողովրդի համար, որպէս ղի հասնի իւր նպատակներին և շահերին»։ Հայոց Հոգևորականութիւնը ինչ մի եպերելի նպատակ և շահ ունի որ դաստիարակութիւնը արուեստական միջոցով այդ շահերին և նպատակներին յարմարեցրած լինի. ցայսօր ոչ է նկատել մեր դպրոցներում և մեր դպրոցներից դուրս եկած սաների մէջ կառավարութեան և ժողովրդեան բարւոյն դէմ հակառակ ցոյցեր։ Մենք հաստատապէս կըվկայենք որ մեր սաները ստանալով պատշաճաւոր կրթութիւն և դաստիարակուելով քրիստոնէական հոգւով իրրև կանայք դպրոցում սովորում են, «տալ չկայսերն՝

կայսեր, և զԱստուածոյն՝ Աստուածոյ և ոչ ումեք պարտապան գտանիլ։ » Ահա պաշարով դուրս գալուց յետոյ՝ նոքա կեանքի մէջ երեք աստիճան են ընտրում, հոգևորական կչումն, առևտուր և արհեստ կամ երկրագործութիւն. իսկ այդ աստիճանում գործողների աներկմիտ ջանքը ի շահ կառավարութեան և երկրի՝ աներկբայ է։

Մի պաշտօնական լրագիր, որպիսին է Կովկասը, պէտք է զգոյշ լինէր մի ամբողջ ազգի և նորա հոգևորականութեան դարաւոր անկեղծ հպատակութեան զգացումներին դիպչելուց. Հայերս շատունակ բարբարոսների սրածութեան նշանակ լինելով՝ Մեծն Պետրոսից սկսած մեր աչքերը դարձրած ենք եղել դէպի Ռուսաց մեծազօր Կայսերութիւնը և այդ կայսերութեան հովանու տակ անդորրութիւն գտնելու համար՝ չենք խնայել ոչ մի աշխատանք, որոնք արձանագրուած են տէրութեան յիշատակարաններում։ Երբ երկիրը Պարսից իշխանութեան տակ էր՝ ի ցոյց մտերմութեան և ակնածութեան առ Գահն Ռուսիոյ, Երջանկայիշատակ Սիմէօն Կաթուղիկոսը մի դարուց աւելի առաջ սահմանել է գոհացողական մաղթանք. սոյն մտերմութիւնը և հաւատարմութիւնը ցայսօր շարունակել ենք և պիտի շարունակենք. արդեօք պէտք էր Կովկասին վիրաւորել և մեր դարաւոր անկեղծութեան փոխանէն աշխարհի առաջ կասկածելի հռչակել. ցաւում ենք։

Կովկասը չի բաւականանում Հոգևորականութեանը միայն կառավարութեան առաջ կասկածելի ցոյց տալ, այլև աշխատում է ժողովրդեան առաջ և կասկածելի առնել, եթէ Հոգևորականութիւնը թէ՛ կառավարութեան և թէ՛ ժողովրդի հակառակ է գնում, ուրեմն ինչ է նորա շահը կամ նպատակը և, Կովկասի ասելով ո՞ւմ համար են աշխատում «Ձեռք բերել աշխարհական իշխանութիւն և առաջնորդութիւն քաղաքի վիճակի»։ Մենք աշխարհական իշխանութիւն և առաջնորդութիւն քաղաքական վիճակի ձեռք բերելու համար չենք մտածում. շատ է մեզ եթէ կարողանանք իբրև շնորհակալու հպատակներ վայելել մեր օրհնաբանեալ Տէրութեան շնորհները՝ Հոգևորականութիւնս ոչ մի բանով վնասակար չէ եղել ժողովրդի հոգևոր և մարմնաւոր շահերին՝ բացի «պահպանելուց իւրեանց լուսաւորչական հաւատոյ վարդապետութեան մաքրութիւնը», որ Հայոց Հոգևորականութեան իսկական պարտքն է։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի Վ.ԱՂԱՐՇԱՊԱՏ.